№ 108 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 24 ՄԱՅԻՍԻ

1911

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 24 ՄԱՅԻՍԻ № 108

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների [illegible]ր վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

Աննա Նահապետեան Եղիազարեան և իր որդիները խորին վշտակցութեամբ յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր թանգագին և անմոռանալի ամուսնու և միւսներն իրանց սիրելի հօր՝

ԲԱՐՍԵՂ ԵՂԻԵԱՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ Թիֆլիս, Վետցէլի հիւրանոցում, ամսիս 23-ին, երկարատև հիւանդութիւնից յետոյ։ Մարմնի յուղարկաւորութիւնը հիւրանոցից դէպի երկաթուղու կայարան տեղի կունենայ այսօր, մայիսի 24-ին, $3^{1}/_{2}$ ժամին ճաշից յետոյ։ Թաղումն Երևանում։ 1—1

Բարսեղ Եղիեան Եղիազարեան և Ընկ. վաճառականական տունը խորին վշտով յայտնում է բարեկամներին և ծանօթներին վերոյիշեալ ֆիրմայի գլխաւոր՝

ԲԱՐՍԵՂ ԵՂԻԵԱՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆԻ

անսպասելի մահը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում, մայիսի 23-ին, Վետցէլի հիւրանոցում։ Հանգուցեալի մարմնի յուղարկաւորութիւնը կը կատարվի յիշեալ հիւրանոցից դէպի երկաթուղու կայարան այսօր $3^{1}/_{2}$ ժամին ճաշից յետոյ, իսկ թաղումը տեղի կունենայ Երևանում։ 1—1

Երկրորդ տարի
4400 ֆուտ ծովի մակերեւոյթից։

ՍԱՆԱՏՈՐԻՈՒՄ
ԵՒ ԱՄԱՌԱՅԻՆ ԳԱՂՈՒԹ
ԲԺԻՇԿ Վ. Դ. ՂԱՄԲԱՇԻՁԷԻ

Սէզօնը յունիսի 15-ից մինչեւ օգոստոսի 31-ը։

ՊԱՏԱՐԱ-ՑԵՄԻՈՒՄ, Բակուրիանի երկաթուղ. գծի վրայ։

Ընդունվում են առողջացող երկսեռ երեխաներ 8—15 տար., խոնջացածներ, վերառողջացողներ, թոյլ սննդառութիւն, ախորժակի պակասութիւն, մալարիա, արեան պակասութիւն, նեվրաստենիա և այլն ունեցողներ։ Բժշկութիւն կլիմատիկական եւ առողջապահական—լեռնային օդ, սօսենիների անտառ, ուժեղ սնունդ, շարժական խաղեր, ֆիզիկական մարզանքներ, մարմնամարզութիւն, օգտակար աշխատանքներ, ջրաբուժութիւն, օդային վաննաներ և այլն։

Մանրամասն տեղեկութիւնների համար գրաւոր դիմել. Д-ру В. Д. Гамбашидзе, черезъ Боржомъ. Ծրագիրն ուղարկվում է ձրի։

(Ե. Կ.) տռ. 529. 10—4

Վաղը, չորեքշաբթի, մայիսի 25-ին

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Ընկ. միջոցները շատացնելու համար

ՄՈՒՇՏԱՅԻԴ ԱՅԳՈՒՄ

—տեղի կունենայ—

ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ

Փոքրերի համար. 1) Երթ դրօշակներով, 2) Բազմակողմանի խաղեր, 3) Катанье.

Մեծերի համար. 1) Տեղական պարեր ռոտոնդոյում՝ ազգային տարազներով և սազանդարի նուագածութեամբ, 2) Գուրիական երգեցիկ խումբ և «Վայ-վայ» սիմֆոնիական երաժշտախմբի նուագակցութեամբ, 3) Հնդկական բաղդագուշակ, 4) Ճանապարհորդ. աշխարհի շուրջը, 5) Հնութիւնների մուզէյ, 6) Զբօսանք կենդանի ուղտերի վրայ։

Կը նուագեն սիմֆոնիական և սովորական երաժշտախմբեր։

Մուտքի վճարն է՝ մեծերից 25 կոպ., փոքրերից 15 կոպ.։

Զբօսանքի սկիզբը ցեր. ժամը 3-ից։

(Ա. Օ.) տռ. 567. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, երեքշաբթի, մայիսի 24-ին

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Համերգ սիմֆոնիական երաժշտախմբի՝ Լ. Պ. ՇՏԷՅՆԲԵՐԳԻ ղեկավարութեամբ։

Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ր., կանայք 50 կ., ուսանողները 25 կոպ.։

Համերգի սկիզբը երեկ. ժամը 9-ին։

565. 1—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՈԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ

Բաժանմունքը Թիֆլիսում, Գոլ. պր. 21, տուն Արախտակ. Ընկ., տելէֆոն № 355.
Պահեստում միշտ կան մեծ քանակութեամբ ընտիր պաստառներ ամենավերջին ոճով
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր րուլօն։
Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում։
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ։

(Ե. Շ.) տռ. 207. 50—21

'ДЕШЕВО'
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.

(Կ. Կ.) տռ. 283. 50—23

ОДОЛЬ
Безспорно лучшее полосканіе

Առաջնակարգ գիտնականների միահամուռ կարծիքով Օդոլը կատարելապէս համապատասխանում է առողջապահութեան բոլոր պահանջներին, հետևաբար և համարվում է ատամները մաքրող միջոցներից ամենալաւը։

տռ. (M.74170/74189) 233. 1—1

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այն ընդհանուր յուզմունքը, որ առաջ բերեց քաղաքական աշխարհում ռուսաց կայսերական կառավարութեան կողմից Թիւրքաց կառավարութեանը արված յայտնի բանաւոր նոտան, մինչև այժմ էլ չէ դադարել։

Անկասկած՝ գովելի էր ռուսաց կառավարութեան ցանկութիւնը՝ Թիւրքիայի և Չեռնոգորիայի միջև գլխված ընդհարման առաջն առնելու, որովհետև ոչ մի կասկած չը կայ, որ Թիւրքիան, հակառակ իր բազմատեսակ խոստումների, սպառազինվում էր և սպառազինվում է այժմ էլ, տածելով ագրեսիվ նպատակներ չեռնոգորական փոքրիկ պետութեան դէմ։ Ռուսաստանը, որ բարոյական և պատմական այնքան սերտ կապերով զոդված է Չեռնոգորիայի հետ, չէր կարող լուռ հանդիսատես և անտարբեր մնալ Թիւրքիայի ռազմասէր և յոխորտական ձգտումների հանդէպ։

Եւ թէև Թիւրքիան աճապարեց հանգստացուցիչ պատասխան տալ, թէ ինքը ոչ մի նուաճողական ձգտումներ չունի Չեռնոգորիայի վերաբերմամբ, բայց այդ պատասխանը միևնոյն ժամանակ սաստիկ խուսափողական և անորոշ էր։ Միւս կողմից՝ հասարակական կարծիքը Թիւրքիայում սկսեց սաստիկ բռնկվել Ռուսաստանի դէմ և տեղի ունեցան նոյն իսկ թշնամութեան հասնող ցոյցեր, որովհետև թէ թիւրքական և թէ գերմանական մամուլը շարունակ գրգռեցին հասարակական կարծիքը Ռուսաստանի դէմ, մեղադրելով նրան՝ թէ նա կամենում է միջամտել Թիւրքիայի ներքին գործերին։

Եւ այժմ տպաւորութիւնը այն տեսակ է, թէ իբր ռուսական դիպլօմատիան պարտութիւն կրեց, որովհետև նա չը շարունակեց իր այնքան կտրուկ և հաստատ կերպով բռնած ընթացքը։

Անշուշտ, Ռուսաստանը երբեք դիտաւորութիւն չէ ունեցել պատերազմի բռնվելու Թիւրքիայի հետ, բայց միւս կողմից, ինչպէս շատ ճիշդ կերպով նկատում է «Русское Слово» թերթը, քանի որ քաղաքական մթնոլորտը Բալկանեան թերակղզու վրա շատ խտացել է, միայն Ռուսաստանի վճռական և արժանաւոր պատասխանը Թիւրքիայի խուսափողական, բայց միևնոյն ժամանակ գրգռող գործողութիւններին՝ կարող է պարզել մթագնած մթնոլորտը։

Պէտք է ասել, որ Թիւրքիայում ներկայումս բռնկվող նիւթեր շատ են կուտակվել։ Թիւրքական օֆիցերական մարմինը տոգորված է մեծամտութեամբ և ռազմասիրական տենչերով, և յայտնի է, թէ երբ մի երկրի զօրքը, փոխանակ իր անմիջական պարտաւորութիւնները կատարելու, զբաղվում է քաղաքականութեամբ, այդ երկիրը կարող է շատ անակնկալ դէպքեր արտադրել։ Եւ Թիւրքական օֆիցերական մարմինը ոչ միայն ռազմասէր է դարձել, այլ և տոչորվում է մեծութեան մանիայով, ախտով, որ շատ վտանգաւոր է շրջապատողների համար, ուստի և շատ բնական ենք գտնում ռուս թերթի ցանկութիւնը, թէ եթէ այժմ վերջ չը դրվի կրակի հետ այդ խաղին, վաղը արդէն ուշ կը լինի և հրդեհը համատարած կը դառնայ։

Բալկանեան քրիստոնեաների համակրութիւնը, անշուշտ, Ռուսաստանի կողմը կը լինի և է, որովհետև Ռուսաստանը, հաւատարիմ իր պատմական դերին, իրան պարտաւոր է զգում թոյլ չը տալ, որ փոքրիկ քրիստոնեայ պետութիւնները կուլ գնան օսմանցիների նուաճողական ախորժակին և պան-թիւրքականութիւնը ծաւալ ստանայ ի վնաս քաղաքակրթութեան և լուսաւորութեան։ Այդ կողմից Ռուսաստանի կողմը կը լինի և եւրօպական հասարակական կարծիքը։

Ուրեմն հարկաւոր է, որ ռուսական դիպլօմատիան կարողանայ յաղթական դուրս գալ իր սկսած պայքարից և թոյլ չը տալ, որ խաղաղութիւնը և status quo-ն խանգարվի Բալկաններում։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 և 22 մայիսի

Պետերբուրգ.—Օգինսկիի գործը։ Դատախազի օգնականը, աւարտելով իր ճառը, ընդգծում է, որ Վօնլեարլեարսկիները ներկայացնելով ամենահպատակ խնդրագիր՝ ներկայացրին ընդդմին կեղծ կտակի պատճէնը. անկասկած է, որ կեղծիքը բղխում է Վօնլեարլեարսկիներից։ Մանրամասն ձևակերպելով իւրաքանչիւր մեղադրեալի յանցանքը, դատախազի օգնականը ապացուցանում է, որ Վօնլեարլեարսկիները յանցաւոր են։

Քաղաքացիական պահանջի հաւատարմատար Մակլակովը յայտնում է, որ նա համոզված է կեղծիքի մէջ, և երկար խօսում է յանցաւորների մասին։

Միւս քաղաքացիական պահանջադիրները հրաժարվեցին խօսքից։

Վօնլեարլեարսկիի որդու պաշտպան Անդրէևսկին ասում է, որ Դմիտրի Վօնլեարլեարսկին խաբված է նրանցից, որոնք անձնական կեղտոտ մտադրութիւններ ունէին։ Պաշտպանը նկարագրում է մեղադրեալի սոսկալի դրութիւնը, որը հէնց ինքը չէ ցանկանում ոչ ոքի մեղադրել և գտնվում է մեղադրողների երկու գծերի միջև։ Հետևեալ պաշտպան Գոլդշտէյնը մատնանշում է, թէ մեղադրեալների նստարանի վրա ամենքը հաւասար են։ Ամենից առաջ Վօնլեարլեարսկիի որդուն պէտք է զատել հօրից։

Պետերբուրգ.—Օգինսկիի գործը։ Դլուգօլէնսկիի պաշտպանը խնդրում է արդարացնել մեղադրեալին. Պիլեցկիի պաշտպանը ապացուցում է, թէ Պիլեցկին գործի հեղինակը չէ։

Պետերբուրգ.—Երևանի փոխ-նահանգապետ ստ. սով. Բարանովսկին նշանակվում է Չեռնոմորի նահանգապետ։

Պարիզ.—Ֆէզից հաղորդում են, որ գեներալ Մուանիէն մտել է Բնիմտար շրջանը։ Գուրօն մնում է Ֆէզում։ 2,000 հոգուց բաղկացած տեղական մի զօրախումբ մտաւ Սէֆրու։

Հաւասի գործակալութեանը հաղորդում են Ալժիրից, որ գեներալ Տուտէն, հրաման ստանալով դադարեցնել պատերազմական գործողութիւնները Մուլույա գետի մօտերը, սկսել է պահակատեղիներ հաստատել երկրում հանդարտութիւնը պահպանելու համար։ Մնացած զօրքերը վերադառնալու են իրանց տեղերը։

Զինուորական մինիստր Գաւբանը մինիստրների խորհրդում յայտնեց այն հրահանգների բովանդակութիւնը, որ նա ուղարկել է գեներալ Մուանիէին։ Մինիստրը կարդաց գեներալ Բայլի հեռագիրը, որի համաձայն զինուորական ույժերի դրութիւնը Մուլույա գետի աջ ափին գերազանց է։

Ֆալիէրն այցելեց Մօնիսին։

Աւտօմօբիլների շօֆէրները նոր գործադուլ արին։ Հիւսիսային քաղաքամասում սկսվեց էլեքտրաքարշի ծառայողների մասնակի գործադուլը։

Վիէննա.—Ֆրանց-Յովսէփ կայսրը ընդունեց Էրենտալին մէկ ժամ ունկնդրութեան։

Վիէննա.—«Կոր. Վիլհէլմի» տեղեկութիւնների համաձայն, կայսրի առողջութիւնը շատ լաւ է։

Հռոմ.—Թագաւորական գերդաստանի, բարձրաստիճան պաշտօնեաների, դիպլօմատիական մարմնի, պարլամենտի, գաւառների ներկայացուցիչների և բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ հանդէսով բացվեց Վիկտոր-Էմմանուէլի արձանը։

Ցիցիկար.—Խունխուզների գործունէութիւնը արևմտեան գծի վրա սաստնում է յանդուգն բնաւորութիւն։ Մի հրացանաձգութեան մէջ խունխուզները տուին չորս սպանված։

Խարբին.—Լոյս մայիսի 19-ի գիշերը պահակախումբը ենթարկվեց խունխուզների յարձակման։ Պահակների գնդակներից խունխուզները ցրիւ եկան։

Բելգրադ.—Թագադրութեանը Լօնդօն մեկնեց արքայազն Ալեքսանդրը։

Կլէրմօն-Ֆէրան.—Բացվեց ազգային եօթերորդ խաղաղութեան կօնգրէսը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 մայիսի

Թէհրան.—Ատրպատականի գեն.-նահանգապետ Մուխբիր-ուս-Սալթանէն կանչվեց Թէհրան։ Կառավարութիւնը ժամանակաւորապէս յանձնվեց զօրահրամանատար պրինց Աման-ուլ-Միրզային։

Թաւրիզ.—Սալար-ուդ-Դովլէի եղբայրը քիւրդական մեծ զօրամասով Սակկիզից եկաւ Բուկան, որտեղից Միանդաբի վրայով մտադիր է մեկնել Մարաղա։ Մարաղայի բնակիչները շտապով ամրացնում են քաղաքը և հեռագրով օգնութիւն են խնդրել Թէհրանից։

(Լրագիրներից)

Պարսից կաբինէտի դրութիւնը երերուն է։ Փոխառութիւնից ստացված գումարները սպառվելու վրա են։

Բախտիարների պարագլուխ Սարդար-Ասադը հրահանգներ տալով գնաց Եւրոպա և սպասելու է, մինչև որ նրան կը կանչեն հայրենիքը փրկելու։

«Русское Знамя»-ն փող է փչում, որ Թիւրքիան ռազմական դիրքեր է գրաւում Պարսկաստանում։ Լրագրի ասելով, այդ արված է Ռուսաստանի վրա անսպասելի կերպով յարձակվելու նպատակով։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 մայիսի

Կ. Պոլիս—Հայ լրագիրները հաղորդում են, որ Անատոլիայում քիւրդերը գազանաբար սպանել են 8 հայերի, որոնց թւումն է մի քահանայ՝ Սարգիս անունով։

Բ. Դուռը հերքում է Րէյտէրի գործակալութեան տեղեկութիւնը Էբհա քաղաքը արաբների ձեռքն ընկնելու և Մէկկայի շէրիֆի պարտութեան մասին։

«Սէնիհը», նախկին «Թանինը», ընդգծում է, որ թէ Ռուսաստանում և թէ Թիւրքիայում կան պետական գործիչներ, որոնք անկեղծօրէն ցանկանում են հաստատել ռուս-թիւրքական բարեկամութիւն։ Լրագիրը գտնում է, որ քանի երկու երկիրներն այդպիսի գործիչներ ունեն, կարելի է յուսալ, թէ հող կը ստեղծվի հաստատուն ու երկարատև բարեկամութեան համար։

Կ. Պոլիս.—Վերջնականապէս ընդունվեց բիւջէն։ Եկամուտներն են՝ 28.445,000, ծախքերը՝ 36.233,000. Դեֆիցիտը կազմում է մօտ ութ միլիոն։

Պալատի նիստը տևեց մինչև առաւօտեան ժամը $4^{1}/_{2}$-ը, երբ կարդացվեց նստաշրջանը փակելու հրովարտակը։ Կրակոտ վիճաբանութիւններ առաջ բերեց պալատի և սենատի միջև բիւջէի առիթով ծագած տարաձայնութիւնը։ Սենատը չընդունեց կրճատումները։ Պալատն էլ իր կողմից հակառակեց սենատին։ Համաձայնութիւն չը կայացաւ։ Պալատն առաջարկեց կառավարութեան ընդունել ի գործադրութիւն նրա բիւջէն առանց սենատորական փոփոխութիւնների։ Սենատն, ընդհակառակն, առաջարկեց կառավարութեանը՝ ղեկավարվել իր փոփոխութիւններով։

Կ. Պոլիս.—Պարիզ մեկնեց գահաժառանգ Իւսուֆ-Իզզէդդինը։

Սալոնիկ.—Զինուորական դատարանը ձեռնարկեց քննել «[illegible]» լրագրի գործը, որ մեղադրվում է Ռուսաստանի դէմ ազգաբնակութեանը ոտքի հանելու մէջ։

Ուսկիւբ.—Իշխանութիւններին անձնատուր եղաւ մի բուլղար հայդուկ և յայտնեց յեղափոխական կազմակերպութեան գաղտնիքները։

Քաղաքում և շրջակայ գիւղերում կատարվում են ձերբակալութիւններ և խուզարկութիւններ։ Մի քանի տեղերում գտնվեցին ռումբեր։ Իփէկի սերբ ազգաբնակութեան մէջ տիրում է մեծ յուզմունք։

Ցետինիէ.—Թիւրքաց դեսպան Սադրեդդին բէյը յայտնեց մինիստր-նախագահ Տօմանօվիչին, որ Թիւրքաց զօրքերի մի փոքր վաշտ Սկուտարի լճից դէպի հարաւ բացառիկ նպատակ ունի թոյլ չը տալ գաղտնի զէնքեր փոխադրել ծովային ճանապարհով ապստամբների համար։ Չեռնոգորական պահակախումբ այդտեղում չը կայ։ Չեռնոգորական կառավարութիւնը յամենայն դէպս խնդրել է ըստ հնարաւորութեան հեռացնել զօրքերը սահմանից։

Ցետինիէ.—Մայիսի 20-ին ալբանները կորցրին չափազանց կարևոր, ամենաբարձր դիրքերը Թիւրքաց հարաւային զօրքի դիմաց։

Սօֆիա.—Մայիսի 20-ի երեկոյեան չորս բուլղարներից բաղկացած պահակախումբը ենթարկվեց Թիւրքերի հրացանաձգութեան։ Պատասխան գնդակներից Թիւրքերը ստիպված էին անցնել իրանց հողը։

Սպանված բուլղար օֆիցերի գործը չը հարթվեց, ուստի և բուլղարական կառավարութիւնը պնդում է նշանակել նոր քննութիւն։

Բերլին.—«Նորդ Դէյտշէ-Ալգ. Ցայտունգը» գրում է. «Քաղաքական մթնոլորտում Բալկանեան թերակղզու վրա անցեալ շաբաթ նկատվում էին գրգռման սիմպտօմներ։ Առանձնապէս խաղաղութիւնը պահպանելու գնահատելի է հանդիսանում Ռուսաստանի և Թիւրքիայի մտքերի փոխմանակութիւնը, որի նպաստաւոր վախճանը միաժամանակ հաստատեց գերմանական քաղաքական շրջաններում հէնց սկզբից գոյութիւն ունեցող այն կարծիքը, թէ Ռուսաստանի դիպլօմատիական ակտը բացառապէս հետամուտ էր խաղաղութիւնը պահպանելու։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

—

Բանակը եւ քաղաքականութիւն

Կ. Պոլիս, 12/25 մայիս

Օսմ. հեռագրական գործակալութեան այն հեռագիրը, որ կը հաղորդէր ռուսական կառավարութեան կողմէ Թիւրք կառավարութեան՝ Չերնոգորիայի սահմանագլուխի վրայ սպառազինութիւնները դադրեցնելու ծանուցագիր մը տրուած ըլլալը, ռումբի մը պէս պայթեցաւ և մեծ յուզումի առիթ դարձաւ։ Մասնաւորապէս այդ ծանուցագիրին նշանակութիւնը անով աւելի մեծ կարեւորութիւն կը ստանար, որ միեւնոյն օրը, բուլգար օֆիցէրի մը՝ սահմանագլուխին վրայ Թիւրք զօրաց կողմէ սպաննուելուն համար, բուլգար կառավարութիւնն ալ սպառնալից լեզու մը գործածել կը սկսէր։

Վատ-ազգիներու այն վարչութիւնը, որ Թիւրք կառավարութիւն կը կոչուի, այս նոր տագնապին առջև յուզման նշաններ ցոյց կուտայ։ Զայրոյթն ու կատաղութիւնն ընդհանուր է։ Բոլոր Թիւրք մամուլը ռուս կառավարութեան դէմ բուռն յօդուածներ կը հրատարակէ։ Տակաւին Կ. Պոլսոյ համեմատաբար քաղաքավարի մամուլն է, որ այս լեզուն կը գործածէ։ Եթէ քանի մը օրէ Մանաստըր, Սելանիկ և Ռումելիի ուրիշ քանի մը քաղաքներու մէջ հրատարակուող «Ռումելի», «Սիլահ» (զէնք), «Սինկիւ» (սուին), «Թօփ» (թնդանօթ) և այլ անուններով թերթերը հասնին Կ. Պոլիս, անոնք թերևս ռուս կառավարութեան հասցէին իրենց զայրոյթը ցոյց տան ճիշդ այն ոճով, որով վերջին ատեններս պատուել սկսած են Չերնոգորիայի, Բուլգարիոյ, Յունաստանի վեհապետները և կառավարութիւնները, որոնք «աւազակ», «շուն» և այլ անպատկառ ածականներով պատուուեցան։

Իսկ սպառնական պոռտախօսութիւնները անթիւ ու անհամար են։ Այս թերթերուն թօնալից լեզուն ու հրաշունչ յարձակումները միտքերը գրգռելէ զատ ուրիշ ունէ օգուտ չունին։ Թիւրք խուժանին միտքը արուեստական գրգռութեան մը ենթարկուած է արդէն երեք տարիէ ի վեր՝ մէկ կողմէ Թիւրք մամուլին լեզուագրութիւններովը և միւս կողմէ կոմիտէին պրօպագանդովը։ Այդ գրգռութիւնը մասնաւորապէս արտայայտուեցաւ և մինչև հիմա կարտայայտուի այն պայքարով, որուն կենթարկուին հելլէնները և օսմ. հպատակ յոյները։

Բուլգարներն ու սերբերը չէթէներու խնդրոյն համար զերծ չեն ատելութեան առարկայ ըլլալէ, ինչպէս հայերը իրենց գրաւեալ հողերը պահանջելէն ետ կեցնելու համար թագուն ու նենգամիտ հալածանքի մը ենթարկուած են և իրենց դրացիներէն չար աչքով կը դիտուին։

Երբեմն տիրողներ և բայեաներ կային այս երկրին մէջ. հիմա իսլամներ և ոչ-իսլամներ կան. և հայութիւնը բնաւ փոխուած չէ։ Նոյն անհաւասարութիւնները, նոյն հալածահարութիւնները, նոյն կեղեքումները կան և կը մնան. մէկ խօսքով՝ չէ դադրած այն սոսկալի ատելութիւնը, որ երբեմն տիրողներ և տիրապետեալներ իրարու դէմ ունէին։ Այդ ատելութիւնը մշտավառ պահելու համար քիչ ծառայութիւն չի մատուցաներ ազգերու համերաշխութեան այնքան ջերմօրէն աշխատող (???) Մ. և Յ. կուսակցութիւնը, որ ազգերը իրարու դէմ գրգռելու գերազանց արուեստը ունենալ կը թուի, մասնաւորապէս իր օրգաններուն միջոցաւ։ Վկայ՝ «Թանին» հրատարակութիւնները, և «Սինկիւի», «Թօփի», «Սիլահի» և այլոց վայրահաչութիւնները, որոնց այլ ևս վարժուեցան բոլոր ոչ-իսլամ ժողովուրդները։

Մասնաւորապէս դիտելի է, որ Ռումելիի մէջ հրատարակուած այդ պատերազմաշունչ, յարձակողական և հայհոյալից գրութեանց հեղինակներ կոմիտէին համակիր կամ անոր պատկանող օֆիցէրներ և զանազան աստիճանի զինուորականներ են, որոնք իրենց զինուորական պարտականութիւնները մէկ կողմ թողուցած՝ գրիչ կը շարժեն և ժողովուրդ կը գրգռեն՝ կամ օտար պետութեան մը կամ բնիկ ժողովուրդի մը դէմ։ Ասով զինուորականներ կամ, ուրիշ բառով, բանակը կը խառնուի պետութեան ներքին ու արտաքին քաղաքականութեան և յաճախ այնպիսի կերպով մը, որ կը հակասէ Բ. Դրան դիւանագիտական քաղաքավարի ու կեղծեալ յայտարարութեանց և գուցէ անոնց վիժմանը պատճառ կը դառնայ։

Ասով՝ բանակը փոխանակ օժանդակը և գործիներէն մէկը ըլլալու օրուան կառավարութեան և անոր ուժն ու ձեռքը ներկայացնելու՝ անոր վարիչը ըլլալու յաւակնութեամբը լեցուած է։

Հետեւաբար Բ. Դուռը իր քաղաքականութեան զօրավիգ և իր հրամաններու կամակատար բանակ մը ունենալու տեղ՝ իրեն մրցակից ուժ մը ունի, գործիք մը՝ որ գործաւորն իսկ ըլլալու յաւակնութիւն ունի։

Ասիկա աղէտալի բան մըն է։ Անցեալին մէջ դառնօրէն կրած է Թիւրքիա բանակներու անկարգապահութեան աղէտալի հակահարուածները, մանաւանդ Բ. Դրան՝ բանակին հանդէպ ունեցած տկարութեանց աղէտալի հետեւանքները, և այսօր իբր թէ սահմանադրական ու խորհրդարանական կեանքը ընդգրկող Թիւրքիան դեռ ազատած չէ բանակին պատճառած աղէտներէն ու թշուառութիւններէն։

Օսմանեան պատմութեան էջերը լի են բանակին աղէտալի սխրագործութիւններովը։

Բոլոր՝ բանակը բարեկարգելու հետամուտ կամ եւրոպական քաղաքակրթութեան համակիր սուլթանները բանակի ձեռքով գահընկէց եղած են պատերազմներէն մեծագոյն մասը բանակին աւարառութեան բնազդը գոհացնելու համար յայտարարած են և շատ անգամ վնասակար եղած են կամ պարտութեամբ կամ անօգուտ ուժասպառութեամբ վերջանալով։

Իբր թէ բանակին՝ օսմ. պետութեան քայքայման անցեալին մէջ պատճառ դառնալը անբաւական ըլլար, բանակը հիմա ալ այդ քայքայիչ դերը շարունակել կուզէ։

Տակաւին շատ թարմ է մեր յիշողութեան մէջ 1909 մարտ 31-ի ըէաքսիոնէրական շարժումէն 15 օր հազիւ կանուխ՝ կոմիտէի անվստահութեան քուէով տապալած խորամանկ ու իրապէս մեծ դիւանագէտ ծերունի մեծ-վէզիրին՝ Քեամիլ-փաշայի այն յայտարարութիւնը, ուր դառն բառերով կը գանգատէր «կառավարութեան մէջ կառավարութեան» գոյութենէն և, աւելի ծանր կերպով, բանակի անկարգապահութենէն ու օֆիցէրներուն՝ քաղաքանութեան խառնուելէն։ Խորագէտ հրէածին մեծ-վէզիրը, որ խորապէս ուսումնասիրած էր օսմ. պետութեան անցեալն ու քաղաքական պատմութիւնը, երեք բաւական ստուար հատորներու մէջ ամփոփած ըլլալով զայն, շատ լաւ դիտած էր այն աղէտը, որ բանակը կը սպառնար երկրին, և անոր դարման տանելու համար պաշտօնէ դադրեցուցած է պատերազմական ու ծովային գործոց մինիստրները, որոնք իբր կոմիտէին պատկանող զինուորականներ՝ բանակին և նաւատորմին մէջ քաղաքական կուսակցական գաղափարներու պրօպագանդը կը թոյլատրէին։ Այդ միջոցը կոմիտէին հաշիւներու չէր եկած և ասոր համար Քեամիլ փաշա տապալած էր խորհրդարանին գրեթէ միահամուռ քուէովը։

Սակայն իր բացատրական յայտարարութենէն հազիւ երկու շաբաթ յետոյ՝ մարտ 31-ին պայթող զինուորական ապստամբութիւնը ցոյց տուաւ, թէ ծերունի դիւանագէտը որքան շատ իրաւունք ունէր և զինուորականներու քաղաքականութեան խառնուիլը ի՛նչ աղէտներու կրնար դուռ բանալ։

Երկու տարի յետոյ, այս օրերս, նոյն ակնյայտ ճշմարտութիւնը դարձեալ կը յիշեցնէ սահմանադրութեան հռչակման ջերմօրէն աշխատող զինուորական մը, Սադըկ բէյ, զինուորականի մը վայելուչ կտրուկ ոճով մը։

Իր յայտարարութեան մէջ, այս օֆիցէրը Թիւրքիոյ փրկութեան վերջին փորձը կը համարէ սահմանադրութիւնը, որ վտանգուած կը տեսնէ բանակին՝ քաղաքականութեան խառնուելուն պատճառով։

Իր յայտարարութիւններն անոր համար նշանակելի են, զի այս անձը կը համարուի Մ. և Յ. կուսակցութեան հերձուածին ու պառակտման կազմակերպողը։

Հիմա՝ զրոյցի մը նայելով՝ առժամապէս Սելանիկ խրկուելէն յետոյ՝ Սադըկ բէյ Կ. Պոլիս կուգայ վերստանձնելու համար հեծելազօրաց հրամանատարութիւնը։ Հերձուածին ծագման ատեն, երբ տակաւին Մ. և Յ. կուսակցութեան քառապետները իրենց ազդեցութեան մէջն էին և դահլիճին մէջ աթոռ ունէին, հեռացուցին այս օֆիցէրը Կ. Պոլիսէն, ասով պայքարելու համար հերձուածին դէմ։ Հիմա որ իրենք ինկած են, և հերձուածողները՝ իրենց ստուար մեծամասնութեան վրայ յենուած՝ պարտադրած են իրենց ծրագիրը միւսներու, այս օֆիցէրը կը դառնայ։

Շշուկներ կան, թէ պատերազմական գործոց մինիստրը՝ Մահմուդ Շէվքէթ փաշա՝ ներքնապէս համամիտ է Սադըկ բէյի և հերձուածող իթթիհադականներուն, հաշտ չըլլալով ի բնէ այն քաղաքականութեան, որուն կը հետամտէր Ջաւիդ-Ջահիդ-Թալէաթ-Իսմայիլ Հակկը քառապետութիւնը։ Ասոր համար ընդդիմացած էր Սադըկ բէյը զինուորականութենէ վտարելու առաջարկին, որ անոնք ներկայացուցած էին, և հիմա ալ առժամեայ հեռացումէ մը յետոյ դարձեալ իր պաշտօնին գլուխը կը կոչէ։

Հետեւաբար՝ Մահմուդ Շէվքէթ փաշան ալ համոզուած է, թէ կառավարութեան մէջ կառավարութեան գոյութիւնը—այսինքն Բ. Դրան քաղաքականութեան հանդէպ կոմիտէին անկախ ու անպատասխանատու քաղաքականութիւնը, և բանակին՝ քաղաքական գործերու խառնուիլը—աղէտաբեր է այս երկրին և կրնայ անոր կործանման պատճառ ըլլալ, ինչպէս երբեմն անոր անկման ու նուաստացման պատճառ եղաւ։ Եւ ճիշդ ասոր համար էր, որ, Սադըկ բէյի յայտարարութենէն քանի մը օր յետոյ, երէկ, հրատարակեց իր յայտարարութիւնը բանակին, որով կը հրամայէ չէզոք ու հեռու մնալ քաղաքական խնդիրներէ։ Ռումելիի մէջ հրատարակուող այդ թերթերը ցոյց կուտան, թէ բանակը արդարև չափազանց շատ միջամուխ է երկրին քաղաքական գործերուն և կուսակցական պառակտումներու ենթակայ։

Մասնաւորապէս այդ տխուր իրողութիւնը, որ երկիւղալի մթնոլորտ մը կը ստեղծէ Թիւրքիոյ մէջ, շեշտուեցաւ Մ. և Յ. կուսակցութեան պառակտման օրերուն, երբ Կ. Պոլսոյ հակաիթթիհադական մամուլին ներկայացուցիչներէն «Իկդամ» և «Եէնի Գազէթա», Մէջդի էֆէնդիի խմբակին պահանջումները օրինաւոր ու օգտակար համարած ըլլալնուն համար, զինուորականներու կողմէ խմբագրուած այդ օրգաններուն մէջ վայրենի սպառնալիքներու ենթարկուեցան։ Բանակ մը, որ խորհրդարանին կուսակցական պայքարներով այդքան կը շահագրգռուի, բնական է թէ շատ վտանգաւելի տարր մը չէ և կրնար օր մը իր սպաննելու, ջարդելու, փշրելու, բզկտելու, կտոր-կտոր ընելու սպառնալիքները իրագործելու գաղափարն ալ ունենալ։

Ահա ներքին քաղաքականութեան մէջ անոր կատարած ահեղի ու ահաբեկիչ դերը, որ ուղղակի դէմ է ու հարուածող սահմանադրութիւնը։

Լրացուցիչ նկատողութիւն մըն ալ հետեւալ անգամ։

Շառայլ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

—

Յոբելեանը կատարվեց կիրակի, մայիսի 22-ին, Թիֆլիսի Արտիստական Թատրոնում։

Համաձայն յոբելեանական յանձնաժողովի կազմած ծրագրի, յոբելեանական հանդէսից առաջ, ժամը 9-ի մօտերը, բարձրացաւ վարագոյրը, և հայ դերասանները ներկայացրին յոբելեարի «Պատւի համար» դրամայի 3-րդ գործողութիւնը (Ելիզբարեանի ձեռքով ժառանգական թղթերի գողանի յափշտակութեան տեսարանը)։

Ապա, երկար ընդմիջումից յետոյ ցոյց տրվեց միայն մի պատկեր, որից յետոյ յայտարարվեց, թէ «անկախ պատճառներից» ապօթէօզի բաժինը չի լինի։

Այնուհետև ուղիղ ժամը 10 և 35 րօպէին սկսվեց յոբելեանական հանդէսը։

Բեմի վրա բոլորվել էին շնորհաւորելու եկած պատգամաւորութիւնները և անձինք։

Մեր ալեզարդ և ընդհանուրից սիրված ու յարգված Գ. Սունդուկեանի և մանկական գրող Ղ. Աղայեանի ուղեկցութեամբ բեմ դուրս եկաւ յոբելեարը, որի երևումը առաջացրեց բուռն և երկար ծափահարութիւն։

Սունդուկեան մի քանի խօսքով երկար կեանք ու առողջութիւն մաղթեց յոբելեարին ամենից առաջ։

Յետոյ մէկ-մէկ մօտեցան և շնորհաւորեցին՝

Յոբելեանական յանձնաժողովը, որի նախագահ Հ. Մելիքեանը կարդաց գրված ուղերձը և վերջը յոբելեարի ճակատին դափնեայ պսակ դրեց։

Յոբ. յանձն. փոխ-նախագահ Տ. Յովհաննիսեան կարդաց Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսի օրհնութեան գիրը իր և Էջմիածնի միաբանութեան կողմից։

Տեղակալի գրութիւնը լսվեց յոտնկայս։

Հայոց Դրամատիկական Ընկերութեան կողմից կարդաց ուղերձ դարձեալ Տ. Յովհաննիսեան և յանձնեց յոբելեարին՝ անդամ ընտրված լինելու նշանը։

Յոբելեարի ընկեր-գրողների կողմից երկու խօսք ասաց Ղ. Աղայեան։

Թիֆլիսի քաղ. վարչութեան կողմից սովորականի նման գեղեցիկ ճառեց քաղաքագլուխ Ալէքսանդր Խատիսեան և վարչութեան երեք անդամների հետ մատուցեց մի սկուտեղ։ Խատիսեան շեշտեց այն իրողութիւնը, որ Շիրվանզադէն քաղաքացի գրող է և այսօրվայ կուլտուրական տօնին մասնակցելուց անմասն չեն մնում, բացի հայից, նաև միւս ազգութիւնները։

Յոբելեարի ծննդավայր Շամախի քաղաքի ազգաբնակութեան կողմից շնորհաւորեց դերասան Յ. Աբէլեան և յանձնեց այն համախօսականը, որով տեղեկացվում է, թէ համաքաղաքացիները յոբելեարին նուիրում են մի փոքրիկ հողաբաժին Շամախում։

Ալէքսանդրօպոլի հայ հասարակութեան կողմից մի ուղերձ կարդաց բժ. Ա. Բաբայեան։

Եղաւ շնորհաւորանք Արմաւիրի և Եկատէրինոդարի հայ հասարակութիւնների կողմից։

Շնորհաւորեց մի կին, որի չափազանց ցածր խօսելը յայտնի չը դարձրեց, թէ ում կողմից էր։

Վրացի ուսանող Գօգօլաշվիլին ուղերձ կարդաց վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկ. կողմից։

Բագուի մահմեդական կրթական ընկ. կողմից մի երկար ուղերձ կարդաց Մամէդովը։

Վրաց երեխաների «Նակադուլի» թերթի կողմից իմաստալի խօսք ասաց ռուսերէն Իլիա Նակաշիձէն։

«Աղբիւր-Տարազ» թերթերի կողմից ուղերձ կարդաց իր ոտանաւորի հետ Յով. Թումանեան։

«Հանդէս Ամսօրեայ» թերթի կողմից կարդաց ուղերձ Ա. Սարուխանեան։

«Ազգ. Հանդէսի» կողմից երկու խօսքով շնորհաւորեց Դէմիրճօղլեան։

«Հասկեր» մանկ. թերթի կողմից՝ տ. Լիսիցեան։

«Լումայի» կողմից կարդաց ուղերձ ուսանող Աղանեան։

«Խաթաբալա» և «Սուրհանդակ» թերթերի կողմից շնորհաւորանքի խօսք ասաց Ատրպետ։

«Գեղարուեստի» կողմից՝ Գ. Լևոնեան։

«Հորիզոնի» կողմից Գ. Վալադեան։

Նոր-Նախիջևանի «Լոյս» թերթի կողմից՝ Յ. Մալխասեան։

«Эрив. Вѣстникъ»-ի կողմից իմաստալի խօսեց խմբագրութեան պատգամաւոր-երիտասարդ։

Վրաց Դրամ. Ընկ. կողմից կարդացվեց ուղերձ ռուսերէն և մատուցվեց շքեղ պսակ։

Զուբալօվեան Ժող. Տան երաժշտասէրների խմբի կողմից շնորհաւորեց ռուսերէն ուղերձով դաշնակահար Տէր-Դաւթեան։

Վրաց Ֆիլարմօնիկ Ընկ. կողմից կարդացվեց ուղերձ։

Թիֆլիսի Արտիստիկական Ընկ. կողմից շքեղ պսակ մատուցեց Աբէլեան։

Հայուհեաց «Մեղու» Ընկ. և Ժողով. Ընթերցանութիւններ Կազմակերպող Ընկ. կողմից ճառեց Վլ. Վարդանեան։

Զուբ. Ժող. Տան Հայկական Սեկցիայի կողմից շնորհաւորեց Գ. Երիցեան և խնդրեց յոբելեարին ներկայ լինել յունիսի 5-ին հայ թատերասէրների խմբի ներկայացմանը, որ տրվելու է ի պատիւ յոբելեարի։

Ախալցխայի Դրամ. Ընկ. կողմից շնորհաւորեց Ս. Աջովեան։

Կ. Հ. Բ. Ընկ. կողմից շնորհաւորեց մի քանի խօսքով բժ. Ա. Մխիթարեան։

Շնորհաւորվեց Բագուի Կուլտ. Միութեան Գեղարուեստական Սեկցիայի կողմից, որը և մայիսի 24—25-ին Բագւում կազմակերպելու է յոբելեանական ներկայացում և հանդէս։

Թիֆլիսի Հայուհեաց Բ. Ընկ. կողմից՝ տ. Յարութիւնեան։

Թիֆլիսի Հրատարակչ. Ընկ. կողմից՝ բժ. Զարգարեան, որը, յանձնելով յոբելեարի գրուածքներից մինի տպագրված մի օրինակը կազմած, խոստացաւ ապագայում հրատարակել Շիրվանզադէի բոլոր գրուածքները։

Թիֆլիսի Որբախնամ Ընկ. կողմից ուղերձ ներկայացրեց տ. Պետրոսեան։

Թիֆլիսի «Լոյս» Ընկ. կողմից շնորհաւորեց Աւագեան։

Մակար Ջմշկեանի ոտանաւորը Թիֆլիսի բարբառով կարդաց դերասան Տէր-Դաւթեանը, «մօքալաքէի» տարազով, վարդի մեծ փունջ և կարմիր աղլուխ ձեռքին։

Կ. Հ. Բ. Ընկ. Իգդիրի ճիւղի կողմից՝ Կանայեան։

Ճեմարանի մանկավարժական խմբի կողմից՝ ուսուցիչ Արտ. Աբեղեան։

Ներսիսեան դպրոցի ուսուցչական խմբի կողմից ուղերձ կարդաց Իս. Յարութիւնեան։

Յովնանեան օրիորդաց դպրոցի ուսուցիչների կողմից՝ Դէմիրճօղլեան։

Գայեանեան դպրոցի կողմից ճառեց Նիկ. Տէր-Ղևոնդեան, որը յարակցեց վերջում շնորհաւորանք և՛ իր կողմից։

Թիֆլիսի մի խումբ ժուռնալիստների կողմից, որ կոչվում է «Ժուռնալիստների Ընկերութիւն», եղաւ շնորհաւորանք։

Վրաց Թատրոնի կողմից վրացերէն ոգեւորիչ խօսքեր ասաց դերասան Կ. Մեսխի։

Վրաց հիւանդ դերասան Վասօ Աբաշիձէի շնորհաւորական հեռագիրը կարդաց Գ. Միրաղեան։

Թիֆլիսի քաղաքային վարչութեան ծառայողների կողմից մի ընծայ տուեց Նալբանդեան (Շիրվանզադէն 4 տարի ծառայել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ)։

Կովկ. Հայ Ուսուցչական Միութեան կենտր. վարչութեան կողմից շնորհաւորեց Գր. Վարդանեան։

Ստաւրօպօլի դպրոցի ուսուցչական խմբի կողմից—Մ. Ջմշկեան։

Թիֆլիսի Ժողովարանի կողմից յոբելեարին ընծայ տրվեց մի ծրար 200 րուբլով։

Թիֆլիսի «Alliance Française»-ի կողմից կարդացվեց ուղերձ ֆրանսերէն։

Տրվեց մի նկար։

Աբէլեան-Արմէնեան դերասանական խումբը մատուցեց մի ընծայ։

Հայ դերասանների ընկերակցութեան կողմից շնորհաւորեցին Յարութիւնեան և տ. Մայսուրեան։

Պարիզի Հայ Ուսանողական Միութեան յանձնարարութեամբ մատուցվեց բիւստ և թարմ ծաղիկներ։

Արմաւիրից ընծայ և նամակ էր ուղարկել երգ.-հաւ. Զաւադ-բէկ Բալուղեանը։

Քանդակագործ Միքայէլեանը ուղերձի հետ նուիրեց 2 քանդակ։

Խ. Բաբայեան նուիրեց իր գրած ոտանաւորը։

Այնուհետև Տ. Յովհաննիսեան յայտարարում է՝ թէ ստացվել են զանազան տեղերից բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ, որոնցից մի երկար շարք սկսում է կարդալ։

Վերջում դարձեալ ծափահարութիւն, և յոբելեարը կանգնում է պատասխանելու։

«Յարգելի տիկիններ և պարոններ,—սկսեց նա։—Ես հռետոր չեմ։ Բնութիւնը տալով իմ ձեռքում գրիչ, խլել է լեզուս։ Ուստի ես կը խօսեմ շատ հակիրճ։

«Առհասարակ այսպիսի յոբելեանների ժամանակ, յոբելեարներին վիճակված է յուզվել։ Սակայն ես յուզված եմ ոչ միայն երախտագիտական զգացմունքից, այլև նկատի առած հայ գրականութեան ճակատագիրը։ Հեռու չէր այն ժամանակը, երբ հայ ժողովուրդը խորթ աչքով էր նայում իր մայրենի գրականութեան վրա, այնպէս, ինչպէս խորթ էին նրա համար նմանապէս իր թատրոնը, վարժարանը։ Մեր պապերը իրանց փրկութիւնը գտնում էին սոսկ եկեղեցու մէջ։

«Բայց ժամանակի ոգին իրանն արաւ։ Եւրոպական կուլտուրան իր ազդեցութիւնը դրոշմեց նաև հայի վրա։ Հայը տեսաւ ու զգաց, որ ժամանակն է փոխել իր կեանքը և առաջնորդվել նոր հովերի ուղղութեամբ։ Եւ ահա հայը սկսում է սիրել դպրոցը։ Մենք տեսնում ենք, թէ ինչպէս մեր հայրերը իրանց զաւակներին ուղարկում են բարձրագոյն կրթութեան թէ Ռուսաստան և թէ Եւրոպա։

«Ապա հայը սկսեց սիրել իր գրականութիւնը նոյնպէս։ Առաջին կարապետը եղաւ անմահ Խ. Աբովեանը, որ դրեց աշխարհիկ գրականութեան հիմքը։ Բայց Աբովեանի մահով տգիտութեան խաւարը շարունակվում էր։ Նրա ստեղծագործած «Վէրք Հայաստանի» ջահը անզօր էր լոյս սփռել հայկական մտաւոր համատարած խաւարի մէջ։

«Եւ նրա կորուստը անշուշտ մի սգաւոր էջ գրաւեց մեր պատմութեան մէջ։ Երկար տարիներից յետոյ եկան Ռ. Պատկանեան, Ծերենց, բայց նրանց կորուստը անցաւ հայի առաջից աննշմարելի։ Բայց երբ մեռաւ Րաֆֆին, նրա թաղմանը հայը առաջին անգամ լաց եղաւ։

«Հայ ժողովուրդը չէ կարող պոկվել շարունակ պտտվող անիւից. Նրա այդպիսի մի փորձը կազդանշանէ նրա մտաւոր կորուստը։ Եւ հայ մարդը այնքան առաջ գնաց, որ ստեղծեց յոբելեաններ։ Գր. Արծրունու յոբելեանը գրականութեան երկրորդ յաղթանակն էր։

«Վերջին 20 տարիների ընթացքում կատարվում են յոբելեաններ։ Բայց իմ ցանկութիւնը այն է, որ հայ հասարակութիւնը մի քայլ առաջ գնար և խրախուսէր աւելի երիտասարդ ոյժերին, որոնք ապագայում իցէ թէ տաղանդներ դառնան։

«Պարոններ, գրականութիւնը ինքնին այն վկայականն է, որով ազգերը մտնում են քաղաքակիրթ ժողովուրդների շարքը։ Ի հարկէ օտարի գրականութիւնը նոյնպէս լաւ է, բայց մենք պէտք է ունենանք մեր սեփական գրականութիւնը։ Եւ ինչու չը պէտք է ունենանք. միթէ հայի մարմինը ու արիւնը եւրոպացու մարմնից ու արիւնից զանազանվում է։ Ոչ, ես հաւատում եմ, որ հայը ևս կառաջադիմէ (ծափահարութիւն)։ Ազգերի մեծութիւնը կախված է որակից, և ոչ թւից։ Ես ընդունում եմ, որ հայի խրճիթը աւելի լաւ պէտք է լինի, քան օտարի պալատը... Օրինակ Նօրվէգիան, որի մի բուռն ժողովուրդը տուել է կուլտուրայի ցայտուն ապացոյցներ։ Հայ ազգը ևս պէտք է առաջանայ և, կրկնում եմ, խրախուսէ ու քաջալերէ իր երիտասարդ գործիչներին։

«Հարց եղաւ իմ մասին՝ թէ ես շատ եմ տառապել։ Դա մի փոքր չափազանցութիւն է։ Յայտնի իմաստասէր Բալզակն ասում է. «Աշխարհը—թատերաբեմ է. ամեն մի անհատ դերասան է, և ստեղծագործի դերն արդէն առաջուց որոշված է»։ Եթէ այդ այդպէս է, այո, ես տառապել եմ. սակայն արուեստ ունի և իր հաճոյքն ու ուրախութիւնը. այդ այն ժամանակ, երբ նա ստեղծագործում է, երբ նա աշխատում է և հոգեկան բաւականութիւն է զգում։ Ես անիծում եմ եղել այն րօպէները, երբ ամեն անգամ հեռացած եմ եղել իմ աշխատանքի սեղանից։ Բայց հէնց որ ներքին ոյժով ես դարձեալ մօտեցել եմ և գրիչս ձեռք առել, ես շարունակել եմ ստեղծագործել և հոգեկան պարուրանք ու գգուանք զգալ։

«Իսկ եթէ ասում են, որ ես իմ գործունէութեամբ հասարակութեանը ծառայութիւն եմ մատուցել որոշ չափով, ուրեմն իմ հաճոյքը կրկնապատկվում է, ուրեմն ես աւելի երջանիկ եմ»։

Վերջում յոբելեարը իր ջերմ շնորհակալութիւնն է յայտնում նախ հայ ժողովրդին, յետոյ կաթողիկոսական տեղակալին, այնուհետև բոլոր հայ և օտարազգի ընկերութիւններին և հաստատութիւններին, մամուլին, յոբելեանական յանձնաժողովին, և այլն, և այլն։

Վերջին անգամ դահլիճը դղրդում է ծափահարութեամբ և ժամը $12^1/_2$-ին յոբելեանական հանդէսը փակվում է։

Ես

ԵՐԿՈՒ ՄԵԾ ԿՈՐՈՒՍՏ

I

Ռուսաց գրական աշխարհը կորցրեց երկու նշանաւոր ոյժեր—հռչակաւոր պատմաբան Վասիլի Օսիպօվիչ Կլիւչևսկիին, որի թաղման նկարագրութիւնը այսօր տալիս ենք, և բանաստեղծ Ֆօֆանօվին։

Կլիւչևսկին, որ վախճանվեց Մոսկվայում այս մայիսի 12-ին, 70 տարեկան հասակում, նշանաւոր պատմաբան էր, պատուաւոր անդամ և պրօֆէսօր Մոսկվայի համալսարանի։ Նա մի քահանայի որդի էր. Մոսկվայի համալսարանում ուսումն աւարտելուց յետոյ կարգվեց պատմութեան դասատու Ալէքսանդրօվի զինուորական դպրոցում, իսկ 1871 թ. նշանակվեց Մոսկվայի հոգևոր ճեմարանի պրիվատ-դոցենտ և 1872 թ. յունվարի 26-ին նա, պատմութեան մագիստրոսի տիտղոսը ստանալու համար, պաշտպանեց մի դիսսերտացիա «Հին ռուսական վարքագրութիւններ սրբոց, իբրև պատմական աղբիւր» վերնագրով։ 1879 թ. Մոսկվայի համալսարանի խորհուրդն ընտրեց Կլիւչևսկիին դոցենտ ռուսաց պատմութեան ամբիոնի, իսկ այդ տարվայ վերջին հոգևոր ճեմարանը ընտրեց նրան արտակարգ պրօֆէսօր ռուսաց պատմութեան ամբիոնի։ Պաշտպանելով համալսարանում մի նոր դիսսերտացիա «Բօյարական դումա» բնաբանով, Կլիւչեվսկին արժանացաւ ռուսաց պատմութեան դոկտորի աստիճանին և ապա ընտրվեց համալսարանի արտակարգ պրօֆէսօր, իսկ հետևեալ տարին ընտրվեց հոգևոր ճեմարանի օրդինար պրօֆէսօր։ Երկու տարուց յետոյ նա ստացաւ օրդինար պրօֆէսօրութիւն և համալսարանում։ 1887—89 թ. նա կատարեց պատմա-լեզուագիտական ֆակուլտէտի դեկանի պաշտօնը, իսկ 1889 թ. ստացաւ ռեկտորի օգնականի պաշտօնը, վարելով այդ պաշտօնը $1\frac{1}{2}$ տարի։ 1893 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1894 թ. ապրիլի 1-ը Աբասթումանում պատմութեան դասեր աւանդեց Մեծ Իշխան Գէօրգի Ալէքսանդրովիչին։ 1900 թւից սկսած Կլիւչեվսկին Գիտութեանց Կայսերական Ակադեմիայի պատմութեան և ռուսական հնութիւնների ակադեմիկոս էր, շարունակելով իր դասախօսութիւնները համալսարանում և հոգևոր ճեմարանում, որտեղ աւարտեց իր պաշտօնավարութիւնը 1907 թ., իսկ համալսարանում միայն մինչև 1910 թ., երբ արդէն հիւանդութիւնը ստիպեց նրան ընդհատել իր դասախօսութիւնները։ Դեռ մի քանի շաբաթ առաջ Մոսկվայի համալսարանի խորհուրդը միաձայն ընտրեց նրան համալսարանի պատուաւոր անդամ։ Չը նայելով նշանաւոր բժիշկների խնամքին, հիւանդութիւնը ծանրանալով տարաւ նրան գերեզման։

ԿԼԻՒՉԵՎՍԿԻԻ ՄԱՀԸ ԵՒ ԹԱՂՈՒՄԸ

Մոսկվա, 15 մայիսի

Այսօր թաղեցինք ամսիս 12-ին վախճանված պրօֆ. Վ. Օ. Կլիւչեվսկիի մարմինը։ Դիտմամբ ասում եմ «թաղեցինք մարմինը», որովհետև Կլիւչեվսկիի հոգին անթաղելի, անմոռանալի կը մնայ ռուս հասարակութեան շատ սերունդների համար։ Այդ հոգին, որով ներշնչված ու շնչում են հանգուցեալի գրական վաստակները, շատ երկար ժամանակ դառնալու է ռուս միտքը առաջ ու վեր շարժող զօրեղ խթաններից մէկը... Բաղդաւոր աստղի տակ է ծնվել ռուս ժողովուրդը, որի նոյն իսկ մեծ կորուստների մէջ մեծ մխիթարութիւն կարելի է որոնել ու գտնել։ Ցիրաւի՝ այս ճեմարանական տարին չափազանց չարագուշակ դուրս եկաւ Ռուսաստանի համար. Տօլստօյի ու Մուրոմցեվի գերեզմաններին այսօր միանում է և Կլիւչեվսկիի շիրիմը։ Այս, անշուշտ, դժբաղդութիւն է, չարիք։ Սակայն՝ չարիքը անմխիթարակար դառնալու աստիճանի չէզոքանում է այն գիտակցութեամբ, թէ այդ երրորդութեան յիշատակը ըստ ինքեան մի այնպիսի տարերային ոյժ է, որը աներևոյթ, անմարմին պէտք է գործէ և ստեղծագործէ այնպէս, իբր թէ կենդանի լինէին այդ վեթխարի Տօլստօյը, շիտակ քաղաքացիականութեան կուռք Մուրոմցեվը, վերջապէս՝ բանաստեղծ-պատմաբան Կլիւչեվսկին։

Կլիւչեվսկիի գործունէութիւնը բնորոշելու մտադրութիւն չունեմ։ Այդ չէ խանգարում ինձ, որպէսզի ասեմ, թէ ի՛նչն էր ամենից աւելի գրաւում, դիւթում մարդկանց այդ գործունէութեան մէջ։ Կլիւչեվսկին, իբրև բանաստեղծ, թէ իր գրուածքներում և թէ՝ մանաւանդ՝ իր կենդանի խօսքով վերարտադրում էր և վերապրել էր տալիս այն կեանքը, որով ապրել է անցեալում ռուս ազգը։

Այդ անցեալը բարձրանում էր գերեզմանից, շունչ առնում և ապրում, գործում այնպէս, կարծես ամեն ինչ մեր ժամանակը, մեր աչքերի առաջ կատարվելիս լինէր։ Մարդիկ իրանց սառը ու վսեմ ձգտումներով, կրքերով ու զգացմունքներով, մոլորութիւններով ու մտքերով, իրանց անհատական առանձնայատկութիւններով ու խմբական գործողութիւններով, վայրենի բնազդներով ու կատարելութեան տենչերով հեռու անցեալից գալիս, լցնում էին ունկնդրի երևակայութիւնը և այնտեղ ստեղծում կուռ, եռուն կեանքի մի աշխարհ։ Այդ աշխարհը ստեղծողը և ունկնդրին մեռած կեանքը իբրև ապրող իրականութիւն զգալ տուողը Կլիւչեվսկիի բանաստեղծական հոգին էր, որ թափանցում էր անցեալի խորքերը, ինքը զգում, վերապրում անցեալ կեանքը և սքանչելի, թովիչ խօսքով ու պատկերներով նոյնը զգալ տալիս և իր ունկնդիրներին... Կլիւչեվսկիի գրչի արդիւնքը կը շարունակէ գործել ու ազդել ռուս հոգու վրա, բայց նա չէ կարող փոխարինել նրա շրթունքները, չի անցնի նրա կենդանի խօսքի տեղը։ Անկարելի է նկարագրել այն տպաւորութիւնը, որ այդ բանաստեղծ-պատմաբանը թողնում էր ունկնդիրների վրա իր դասախօսութիւններով։ Եթէ այսպէս կարելի է ասել, Կլիւչեվսկիի նոյն իսկ մարմինը խօսելիս՝ հոգու կերպարանք էր ստանում։ Մարդ մոռանում էր որոշել, թէ այդ մարդու մէջ ի՛նչն է մարմին, ի՛նչը՝ հոգի։ Այո, մարմինը հոգու տպաւորութիւն էր թողնում։ Կը խնդրէի ընթերցողին չը ծիծաղել այս դարձուածքի վրա և քիչ մտածել նրա մասին։ Ահա իմ աչքի առաջ է այդ սիրելի մարդը իր սիրելի, հմայիչ մարմնով ու թովիչ, գերող ձայնով։ Նա կանգնած է ամբիոնի մօտ, նա երբեք չէ նստում։ Նրա ձայնը թոյլ է, որովհետև թոյլ կրծքից է դուրս գալիս։

Բայց լսեցէք այդ թոյլ ձայնը և կիմանաք, թէ ինչ գեղեցկութիւն, ինչ սէր, ինչ հոգի կայ նրա մէջ։ Նայեցէք նրա՝ այդ մարդու շարժումներին և տեսէք, թէ ո՛րքան տեղին են նրանք, ո՛րքան բնական-դերասանական։ Վերջապէս՝ ամենագլխաւորը՝ նայեցէք այդ սիրելի ծերունու դէմքին և տեսէք, թէ ի՛նչ է ասում այդ դէմքը, ի՛նչ լեզուով է խօսում նա, ինչե՛ր է պատմում... Ի՞նչ է անում այս ամենով ամբիոնի մօտ այդպէս գեղեցիկ գործող, սքանչելի խօսող ռուս ծերուկը։ Նա մեռած անցեալին լեզու է տալիս, որ սա ինքը՝ այդ անցեալը գայ, կանգնի, պատկերանայ մեր առաջ եւ պատմէ իր մասին, կրկնէ իր անցեալ կեանքը, ցոյց տայ մեզ իր լաւ ու վատ կողմերը... Լաւ նայեցէք և կը տեսնէք, որ ձեր առաջ կանգնած դասախօսը սոսկ դասախօս չէ. նա անցեալի քանդակագործն է... Քանդակում է այդ անցեալը, քանդակում է ի վերուստ տրված և աշխատանքով ճոխացված տաղանդով, որպէսզի յետնորդ սերունդները օգտվեն այդ անցեալից՝ իրանց կենսական ուղին գծելիս։ Բայց Կլիւչեվսկին միայն բանաստեղծ չէ, որ հոգու թափով վերաստեղծում է անցեալ կեանքը։ Նա միաժամանակ և գիտնական է, որ ճշդութեամբ աշխատում է նկարագրել պատմական կեանքը և տալ նրա պատճառները։ Կլիւչեվսկիի միտքը չի կորցնում իր սառնութիւնը բանաստեղծական երևակայութեան ազդեցութեան տակ։ Բանաստեղծը՝ այսպէս ասած՝ չի կուլ տալիս գիտնականին, չի խեղդում նրան։

Ուստի՝ բանաստեղծ պատմաբանը դառնում է գիտնական պատմաբան եւ։ Այս այսպէս լինելով հանդերձ՝ այնուամենայնիւ՝ Կլիւչեվսկին իշխել է մարդկանց հոգիների վրա և դեռ ևս պէտք է իշխէ գլխաւորապէս այն պատճառով, որ նա ամենից առաջ և ամենից աւելի բանաստեղծ է՝ բառիս ամենալայն, ամենալաւ իմաստով։ Իբրև այդպիսին՝ նա մեծ սիրով, մեծ ոգևորութեամբ ու մի տեսակ՝ զուտ բանաստեղծական թախիծով, զուգէ երբեմն և կարօտով, տալիս է մեզ անցեալ կեանքի պատկերը։ Այդ դեռ բաւական չէ։ Իբրև իսկական բանաստեղծ, օժտված մարգարէական հոգիներին յատուկ գծերով, անցեալի վերապրումներով նա մեր հոգու մէջ արթնացնում է այնպիսի ոյժեր, որոնք ապագայի համար են, որոնք պէտք է ռուս ժողովուրդը և ամբողջ մարդկութիւնը տանեն դէպի սպասվող մեծ վերածնունդը, վերաշինումը... Ունկնդրի հոգու լաւագոյն լարերին էր խփում այդ անփոխարինելի, վարպետ ծերուկը իր սքանչացումներով ու զայրոյթով, իր հեգնութեամբ ու դրուատումներով։ Անպայման՝ Կլիւչեվսկին ձախակողմեան մտածող էր, սակայն՝ ոչ ոքի համար գաղտնիք չէ և այն, որ նրա հայեացքները շատ էլ ձախակողմեան չէին։ Կիզեվետերը նրան, իբր իսկ՝ Կլիւչեվսկիի խօսքերով, համարում է կադէտ։ Եթէ այս ճիշդ է, այն առարկութեամբ միայն, որ աջակողմեան կադէտ։ Իր հայեացքներով բաւականին աջակողմեան լինելով հանդերձ՝ զարմանալին այն է, որ Կլիւչեվսկին իր դասախօսութիւններով առաջ էր բերում աւելի ձախակողմեան տրամադրութիւն։ Այս երևոյթի գաղտնիքը պէտք է որոնել այն բանում, որ Կլիւչեվսկին իր զգացմունքներով՝ իբրև բանաստեղծ՝ աւելի հեռուն էր տեսնում, աւելի հեռուն էր թռչում։ Բայց ձգձգվում է գրութիւնս, ուստի այս մասը վերջացնեմ, ասելով որ Կլիւչեվսկին ռուս սերունդների գիտակցութեան մէջ երկար ժամանակ կապրի իբրև բանաստեղծ պատմաբան, թէև նա միաժամանակ խոշոր գիտնական պատմաբան է։

Եւ զարմանալի չէ, որ նա, այդ բանաստեղծ հոգին, առանձին հրճուանքով էր խօսում մեծ բանաստեղծների մասին։ Այս տեսակէտից հետաքրքրական է հետևեալը, որ դրոշմվել է յիշողութեանս մէջ։

Մի երկու տարի առաջ, երբ 18-րդ դարից անցնում էր 19-րդ դարի բնորոշմանը, դասախօսութեան վերջում նա առանձին ոգևորութեամբ ու հպարտութեամբ աւելացրեց. «Վերջապէս՝ այս դարումն է ապրում ռուս երկրի մեծ բանաստեղծ Տօլստօյը, որի ժամանակակիցը լինելու բաղդն ունեմ ես»։ Կլիւչեվսկին, որ՝ սովորաբար՝ «ես» բառը գործածելու մէջ շատ ժլատ էր, հարկաւոր համարեց դասախօսութիւնը աւարտել այսպիսի անսպարծ յայտարարութեամբ։ Այդ յայտարարութեան միտքը հազարաւոր ունկնդիրները զգացին, ըմբռնեցին իրանց զգայուն հոգիներով և իրանց պաշտելի ուսուցչին վարձատրեցին բուռն, անվերջ ծափահարութիւններով...

Ցիշեմ և մի ուրիշ դէպք, որը կապ չունի Կլիւչեվսկիի տաղանդի բնորոշման հետ, բայց որը տեղիք է տալիս տխուր զգացումների։

Մուրոմցեվի թաղման օրն էր։

Դագաղը դուրս էին բերում համալսարանական եկեղեցուց առաջին Պետական Դումայի նախկին անդամները։ Դոնից հազիւ դեռ դուրս բերին դագաղը, երբ հասարակութեան, բազմահազար հասարակութեան մէջ շշուկ ընկաւ։ Բոլորը ճանապարհ բացեցին դէպի դագաղը մի ծերունու համար։ Դա Կլիւչեվսկին էր։ Նա հիւանդ-հիւանդ եկաւ, որ ինքն էլ՝ թէկուզ իր ձեռքի և ուսերի հպումով՝ մասնակից լինի մարդ քաղաքացու աճիւնը տանելուն։ Նա իր դողդոջուն, թոյլ մարմնով մօտեցաւ դագաղին, դրեց ուսին և այդպէս մի քանի քայլ արեց... Այդ էլ բաւական էր նրա համար։ Նա չը կարողացաւ մինչև գերեզմանատուն գալ և այդտեղից շուտով մեկնեց տուն։

Այսօր՝ չանցած մի քանի ամիս՝ նոյն այդ եկեղեցուց ուսանողները իրանց ուսերով դուրս բերին անմոռանալի Կլիւչեվսկիի դագաղը, որպէսզի տանեն այն գերեզմանատունը, որտեղ հանգչում են Մուրոմցեվի նշխարները...

Կլիւչեվսկին եւս, Մուրոմցեվի նման, հանգիստ կը ննջէ մայր հողի տակը, որովհետև նա իր ազգին տուեց այն, ինչ երկինքը բաշխել էր նրան—իր հոգին։

Սերմնացանը ցանեց իր սերմն ու գնաց։ Սերմն ընկել է պարարտ հողի վրա։ Պտուղը առատ կը լինի։ Միայն պէտք է սպասել...

Պօղ. Աբէլեան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Մի քանի օր առաջ մենք տպեցինք հեռագրական բովանդակութիւնը այն յօդուածի, որ «Новое Время» ռուս թերթը տպել է «Մշակի» դէմ և կաթողիկոսական հարցի առիթով։ Այդ յօդուածը, որի հեղինակն է Զարիֆովը (Նոր-Նախիջևանի հայոց թեմ. դպրոցի նախկին տեսուչը) և որի վերնագիրն է «Կանդիդատներ Էջմիածնի գահին», տպված է ռուս թերթի մայիսի 16-ի համարում։ Առաջ ենք բերում ամբողջութեամբ.

Այդ հարցը, որ մինչև այժմ հայ ժողովրդի համար ունէր գործնական նշանակութիւն, այժմ անցել է թէօրիայի շրջանը. թանաքային պատերազմ է բորբոքվել «հոգևոր աստիճանաւոր» (сановникъ) խօսքի շուրջը, որ յիշատակված է Կովկասի Փոխարքայի հրահանգների մէջ և որին «Մշակը» և մի քանի ուրիշ լրագիրներ կամենում են տալ աւելի լայն մեկնութիւն։ Գտնվել է ինչ-որ արտասահմանյին մի իրաւագէտ, Մեղաւորեան ազգանունով, որը, հաւանօրէն, իր ազգանուան ստուգաբանութիւնը արդարացնելու համար, լեզուագիտական մեկնաբանութիւնների գալարումների մէջ, «հոգևոր աստիճանաւոր» խօսքին տալիս է բոլորովին կամայական նշանակութիւն։

Նա դատարկ խօսքով միայն հաստատում է, որ այդ բառով կարելի է հասկանալ ամեն մի հոգևորական անձն, սարկաւագից սկսած մինչև կաթողիկոսը։ Այդպիսի լայն մեկնաբանութեան դէմ հանդէս եկաւ «Սուրհանդակի» էջերում Կարապետ քհ. Մալխասեանցը, որ ընդարձակօրէն հերքեց այդ մեկնաբանութեան հիմնաւորութիւնը։ Կաթողիկոսի ընտրութեան համար կանդիդատների շրջանը լայնացնելու հարցը այն մտքով, որ նրա մէջ կարելի է մտցնել «վարդապետներին», ամուսնացած հոգևորականութիւնը, ինչպէս պէտք էր սպասել, լուրջ առարկութիւնների հանդիպեց շատ հայ լրագիրների և ձեռնհաս անձանց կողմից, որոնք տեսնում են դրա մէջ օրէնքի խախտումն։ Կանգնելով օրինականութեան հողի վրա և ամենևին չը միջամտելով կաթողիկոսի ընտրութեան ժամանակ հայ ժողովրդի կամքի ազատ արտայայտութեան գործին, կառավարութիւնը սակայն իրաւունք ունի պահանջելու ժողովրդական պատգամաւորներից օրինական վերաբերմունք դէպի ընտրութիւնները և սահմանված կարգի ճշգրիտ գործադրութիւն, ուստի և աշխարհական կանդիդատ առաջարկելը ընտրութեան համար, իբրև հակառակ «Պօլօժենիէյին», à priori կարելի է ասել, կը ծառայէ առիթ ընտրութիւնների բեկման։ Եւ ճշմարիտ՝ ինչպէս կարելի է թոյլ տալ, որ քրիստոնէական եկեղեցու գլուխ կանգնի աշխարհական անձն, որ պատահաբար կոչված է հոգևորական աստիճանին, փոխանակ հոգևորական աստիճանաւորի, որ պատրաստված է այդ պաշտօնի համար իր ամբողջ նախընթաց գործունէութեամբ, պատասխանատու եկեղեցական-վարչական պաշտօնների մէջ։ Ոչ իրաւագիտական, ոչ փիլիսոփայական, ոչ նաև աստուածաբանական կրթութիւնը իրաւունք չեն տալիս ումևիցէ ընտրվել հոգևոր-վարչական ամենաբարձր պաշտօնի համար, որպիսին հանդիսանում է էջմիածնի գահը, որովհետև եկեղեցու պետը բացի տեսական գիտելիքներից պէտք է ունենայ և գործնական ծանօթութիւն կանոնների, ծէսերի և եկեղեցական աստիճանակարգութեան հետ, իսկ դա ձեռք է բերվում միայն երկարատև և յամառ աշխատութեամբ։ Ի՛նչ հեղինակութիւն կարող է վայելել հոգևորականութեան և հասարակ ժողովրդի աչքում եկեղեցու պետը, որ գործնականապէս անծանօթ է եկեղեցական աստիճանակարգութեան և առհասարակ ժամասացութեան հետ։ Միթէ բաւական չէ, որ վերջին ժամանակներս ձեռնադրված երիտասարդ եպիսկոպոսներից ոմանք (դրանցից մինը նոյն իսկ աչք ունի պատրիարքական գահի վրա և կադետական օրգանի կանդիդատն է), չը կարողանալով պատարագ մատուցանել և գործածել Մաշտոցը, գայթակղեցնում են միայն աստուածապաշտ ժողովրդին։

(Կը շարունակվի)

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Ղզլ գիւղ (Շամշադնի գաւ.), 9 մայիսի

Երէկ, ամսիս 8-ին, հոգևոր իշխանութեան հրամանի համաձայն, Շամշադնի գիւղերի երկու-երկու ներկայացուցիչները ժողովվեցին Բերդ գիւղը կաթողիկոսական ընտրութեան պատուիրակներ ընտրելու համար։ Ժողովը բացեց տեղիս գործակալը և կանոնաւոր համարեց, որովհետև բացակայ էր միայն ներկայացուցիչների մի չորորդ մասը։ Ներկայացուցիչները նախ քան պատուիրակների ընտրութեան ձեռնարկելը, սկսեցին խորհրդակցել կաթողիկոսական թեկնածուների մասին. մի քանի բարձրաստիճան հոգևորականների շուրջը պտտելուց յետոյ՝ ժողովը կանգնեց Կարապետ սրբազանի թեկնածութեան վրա։ Պատուիրակ ընտրվեցին տեղիս գործակալ Հ. Բաղալեանը և Թիֆլիսաբնակ Ալէքսանդր Ջաղէթեանը։ Ս. ք. Միքայէլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Այժմ արդէն աւարտված է «Դաշնակցութիւն» կուսակցութեան մեծադղորդ գործի քննութիւնը և յանձնված է Նօվօչերկասկի դատաստանական պալատի դատախազին։ Այդ գործի առիթով քննութիւնը կատարող կարևոր գործերի քննիչ Լըժինին թոյլատրված է երկարատև արձակուրդ։ Նրա պարտականութիւնները, «Т. Л.»-ի ասելով, յանձնված են կարևորագոյն գործերի քննիչ Գ. Մօվին։

◆ Վերադարձաւ Պետերբուրգից մայիսի 21-ի երեկոյեան Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը։ Նրա հետաքրքրական պատմութիւններից երևում է, որ Պետերբուրգի բարձր շրջաններում դէմ չեն Թիֆլիսում համալսարան բանալուն, եթէ իրապէս զգալի տեղական միջոցներ լինեն հրապարակի վրա, որովհետև խոստացված գումարների համարեա մեծ մասը իսկապէս հարկաւոր է գործադրել քաղաքի հերթական նախագծված ձեռնարկութիւնների վրա։

◆ Մօտիկ ապագայում կը ձեռնարկվի Թիֆլիսից-Բագու հեռախօս հաստատելու աշխատանքներին։ Այդ գործը գլուխ բերելու համար պետական գանձատանը յատկացրել է 163,000 րուբլի։

◆ Դեռ չը սկսվեց էլեկտրաքարշի երթևեկութիւնը Մուխրանեան նորակառոյց գծի վրա։

◆ Թիֆլիսում ձեռնարկված է շտապով կազմակերպել շուտափոյթ օգնութիւն գանազան դժբաղդ դէպքերում, որի համար հրաւիրված են 4 բժիշկներ, 6 սանիտարներ, որոնց պահպանութեան համար յատկացված է 4,000 ր.։ Վիէննայից ստացված կառքի համար որոշված է 800 ր.։

◆ Ցունիսի 2-ին Թիֆլիս են գալու էկսկուրսիայով Պետերբուրգի գիմնազիական ուսուցչանոցի մի խումբ սաներ։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի նոր ձայնաւորներ ընտրելու առիթով՝ ընտրողական ցուցակները տպագրված կը հրատարակվեն օգոստոս ամսին, իսկ ընտրութիւնները կը կայանան նոյեմբերի 20-ին։

◆ Էջմիածնի վանքի վերանորոգութեան խնդիրը գտնվում է գանդաղ լուծման շրջանում։ Որովհետև նշանակված մրցումը չը կայացաւ, ուստի այդ խնդրով զբաղվող կոմիտէն ընտրել է իր միջից մի փոխ-մասնաժողով՝ վիճելի հարցերը տեղում լուծելու համար։ Փոխ-մասնաժողովի նախագահն է նկարիչ Գ. Բաշինջաղեան, քարտուղարը՝ Գրինեվսկին։ Ցիշեալ մասնաժողովը Էջմիածին է մեկնելու մայիսի 27-ին երեք օրով։

◆ Մորեխը ոչնչացնելու աշխատանքները Բագուի նահանգում առաջ են գնում ուժեղ տեմպով և փայլուն հետևանքներով։

◆ Երէկ էկսկուրսիայով Թիֆլիս եկան Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի աշակերտները, որոնք մտադիր են գնալ Անի ևս։

◆ Գայիանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Այսօր, երեքշաբթի, մայիսի 24-ին, երեկոյեան ժամը 7-ին նշանակված է Մողնու եկեղեցու ծխականների ծխական ժողով, առաջուց յայտարարված երկու ժողովների փոխարէն։ Զբաղմունքի առարկաները մնում են նոյնը»։

◆ Ինչպէս յայտնի է, այս տարի տեղի չունեցաւ Ղուկասեան մրցանակաբաշխումը, որ ամեն տարի կատարվում էր ապրիլի 7-ին։ Այժմ մենք ստացանք մրցանակաբաշխութեան մնայուն յանձնաժողովի տեղեկագիրն, որից երևում է, որ յանձնաժողովը թէև ստացել էր երեք աշխատութիւն, բայց հնարաւոր չէ գտել մրցանակ տալ առաջարկված աշխատութիւններին և որոշել մրցանակին յատկացված գումարը գործ դնել նախկին ընտիր մատենագրութիւնների տպագրութեան վրա։ Այդ գումարով նա տպագրել է Ստեփաննոս Օրբելեանի ստուար պատմութիւնը։

◆ Վրաց «Սինաթլէ» թերթի խմբագրական կազմից հեռացել են Գ. Ախալցիխէլին, Դ. Դումբաձէն, տաղանդաւոր բելլետրիստ Իա Եկալաձէն՝ Ս. Մգալոբլիշվիլին և Թ. Նասիձէն։ Հեռանալու պատճառը վերոյիշեալների և թերթի խմբագիր Ի. Ռատտամաշվիլիի միջև ծագած տարաձայնութիւններն են։

◆ Հանգուցեալ գրող Ն. Նիկոզլիշվիլիի «Քրիստինէ» գրուածքը թատերական պիէսի վերածող Պ. Իրէթելին ներկայիս պիէսի է վերածել նոյն գրողի մի գրուածքը՝ «Ծարէլ Մկլավաձէ» խորագիրը տալով նրան։ Պիէսը, որ 4 գործ. ունի, կը խաղացվի յունիսի կէսերին ժողովրդական թատրոնի բեմի վրա վրացի սիրողների խմբի ձեռքով, որը և այս պիէսը ձեռք է բերել սեփականութիւն։

◆ Վրաց ակումբը կը բացվի մօտ ապագայում։ Վրաց ազնուականութիւնը ակումբի համար յատկացրել է Վրաց թատրոնին կից գտնվող շինութիւնը։

◆ Մայիսի 22-ին օծումից յետոյ բացված յայտարարվեց Մուշտայիդ այգին։

◆ Բագուի քաղաքապետի կարգադրութեամբ փակվեց «Կոչ» թերթը և «Современная Жизнь» շաբաթաթերթը։

◆ «Баку» թերթը մի ցաւալի լուր է տալիս. «Մայիսի 20-ին, ցեր. ժամը 3-ի մօտերը, 7-րդ քաղաքամասի ոստիկան Սիմէօն Կուզմինը, մտնելով Շաժգունովի լուսանկարչատունը, սկսեց ցոյց տալ ծառայողին նոր տեսակի ատրճանակը, բայց ատրճանակը անզգուշութիւնից պայթեց և, ծակելով լուսանկարչատան պատը, խրվեց այդ պահին փողոցով անցնող Շուշանիկ Շահլամեանի ձախ աչքում և մնաց աչքի մէջ։ Բժիշկների ասելով՝ վիրաւորվածի դրութիւնը անյուսալի է, որովհետև ուղեղը դուրս է թափվում աչքից։ Օրիորդ Շուշանիկը հանգուցեալ երգիչ Ներսէս Շահլամեանի դուստրն է։ Վերջերս միայն աւարտելով Պետերբուրգի ինստիտուտը, նա պատրաստվում էր մեկնել Գերմանիա բարձրագոյն ուսման»։ Ցետագայ տեղեկութիւններին նայած վիրաւորված Շուշանիկ Շահլամեանը ուշքի է եկել։

◆ Բագւում ձեռքէ-ձեռք է անցնում արդէն այն անձանց ցուցակը, որոնք առաջարկվում են իբրև քաղաքային դումայի ձայնաւորներ 1911—15 թ. թ. ժամանակաշրջանի համար։ Այդ տեսակ տպագրված թերթիկները երկուսն են. մէկը՝ հայերի, մահմեդականների և ռուսների միացեալ բլոկի, միւսը՝ Իսրաֆիլ Հաջիեվի խմբի կողմից։ Համաձայնութեան ցուցակում քուէարկութեան են առաջարկված 82 թեկնածուներ, որոնցից 44 մահմեդականներ, 20 հայեր և 18 ռուսներ։ Երկրորդ ցուցակում առաջարկված են 80 հոգի, որոնցից 40 մահմեդականներ, 20 հայեր և 20 ռուսներ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ալ. Աբէլեանի ռուսերէն «Лига свободной любви» (Ազատ սիրոյ լիգան) պիէսը մի թատրոնական ոճրագործութեան հանդիպեց։ Դերասանական խումբը, որ խաղաց այդ պիէսը շաբաթ օր, մայիսի 21-ին, Թիֆլիսի Արտիստական թատրոնում, այնքան անձեռնհաս էր բեմական գործում և կազմված էր այնքան թոյլ, անփորձ և անբարեխիղճ կատարողներից, որ առաջին գործողութիւնից իսկ յուսահատութիւն տիրեց հանդիսականներին։

Անշուշտ պիէսը սարսափելի կերպով վնասվեց այդ հանգամանքից և նրա արժանաւորութիւնները կամ հետաքրքրութիւնը սքօղվեցին։

Ռեժիսսօրական մասը անչափ թոյլ էր և ծիծաղելի դրութեան մէջ էր դնում դերասաններին և ամբողջ տեսարանները։

Այդպիսի խմբի ձեռքով նոր պիէս ներկայացնելը մեծ սխալ էր։ Ակրոզ

Ուրբաթ, մայիսի 20-ին, Վրաց թատրոնի ամառային և ձմեռային շէնքերում ու թատրոններին կից գտնվող այգում կայացաւ զբօսանք-ներկայացում յօգուտ Վրաց Դրամատիկական Ընկերութեան։

Ցերեկվայ ժամը 4-ից սկսած թատրոնի ամբողջ շէնքը զարդարված էր դրօշակներով և կանաչներով։ Զբօսանք-ներկայացման համակրելի նպատակը թէ զբօսանքի և թէ ներկայացման ժամանակ գրաւել էր ստուարաթիւ բազմութիւն ամեն ազգերից։

Սրտի խորին գոհունակութեամբ գալիս ենք արձանագրելու մի ուրախալի երևոյթ։

Մամուլի մի որոշ մասի և ի մասնաւորի «Մշակի» քարոզած համերաշխութեան գաղափարը իր նուաճումներն է անում։ Ազգայնական ատելութեան կօշմարը անցնում է։ Արձանագրածներիս իբրև ցայտուն ապացոյց կարող է ծառայել այն իրողութիւնը, որ թէ զբօսանքի ընթացքում այգում և թէ ներկայացման ժամանակ մենք տեսանք բաւականաչափ հայերի, որոնք եկել էին իրանց լումաներով նպաստելու Վրաց Դրամատիկական Ընկերութեան նիւթական միջոցների ուժեղացման։ Այսօրինակ խրախուսելի երևոյթը մէկն է այն միջոցներից, որոնք առաջ բերելով մերձեցում երկու ազգերի առաջադէմ ինտելլիգենցիայի և գիտակից տարրերի մէջ, կը նպաստեն փոխադարձ յարաբերութիւնների բարւոքման գործին, մօտեցնելով իրար շովէն մտքեր քարոզող անձանց քարոզած ատելութեան շնորհիւ իրարից հեռացած հայ և վրացի ինտելիգենտ և առաջաւոր տարրերին, որոնց միջև գոյութիւն ունեցող պատուարը արդէն սկսել է քանդվել։ Եւ փառք ու պատիւ այն գործիչներին ու մամուլի այն մասին, որոնք կը նպաստեն այդ պատուարի վերջնական քայքայման գործին, որի տեղ կը կանգնեցվի նոր, թարմ և հոյակապ շէնք, շէնք համերաշխութեան և եղբայրական սիրոյ։ Փառք գալիք երջանիկ օրերին...

Բայց ներողութիւն, ընթերցող, որ ակամայից շեղվեցի ներկայի իմ նպատակից. բայց մեղաւոր չեմ զգում, որովհետև մեր տխուր իրականութեան մէջ եթէ կայ մի փայլուն, շողշողուն աստղ, որը պիտի ոգևորէ մեզ բոլորիս, դա ապագայի յաղթանակի՝ համերաշխութեան պայծառ յոյսն է, որ գիշերային խաւարի մէջ փայլում է արդէն գրաւիչ և յուսատու մի լույս, մի աստղ... Մեծ գործը սկսված է արդէն, հարկաւոր է միայն նրան ույժ տալ, առաջ մղել, կենդանարար ոգի ներշնչել, և մեծ ապագան մերը կը լինի անպայման։ Երեկոյեան ժամը 9-ին սկսվեց ներկայացումը։ Դրված էր՝ «Մայիսի տօնը հին Հռոմում» բալէտը, որը, շնորհիւ պարուհի Սլեզինայի, կենդանի կերպով խաղացվեց։ Նկատվում էր, որ մի հմուտ ձեռք աշխատել էր այս ինքնին անբովանդակ՝ և ուսանելի կողմերից զուրկ խաղին պարգևել որոշ կենդանութիւն։ Իսկ այդ հմուտ ձեռքը այս դէպքում դերասան Վ. Վալերիանօվն էր։

Տ. Սլեզինան ստացաւ բազմաթիւ ծաղկէ կողովներ և ծափահարվեց բազմիցս։ Բալէտից յետոյ տեղի ունեցան կովկասեան և եւրոպական պարեր, մասնակցութեամբ տ. Սլեզինայի, Վալերիանօվի և մի քանի վրացի պարողների։

Բացի լարանուագ երաժշտախմբից, այգում նուագում էին սազանդարների, զուռնայի փողահար երաժշտախմբի նուագախմբերը։

Վրաց մամուլի սեպուհ պարտականութիւնն է արձանագրել համերաշխութեան ամրապնդման այս թէև փոքր, բայց ցայտուն ապացոյցը և յորդոր կարդալ վրացի հասարակութեանը փոխադարձաբար յաճախել հայկական կուլտուրական հաստատութիւնների օգտին տրվող ներկայացումներին, ի հարկէ, ոչ թէ ի նկատի ունենալով վրացի այցելուների լուման, այլ փոխադարձ շփման օգտակարութիւնը։

Միայն համերաշխութեան անունից խօսվող ճառերը չեն կարող օգտաբեր լինել, այլ անհրաժեշտ են ըէալ, գործնական քայլեր՝ մեծ նպատակի իրականացման օգտին։

Ցար. Գասպարեան

ՄԱՄՈՒԼ

«Հօրիզօն» թերթը կիրակի օրվայ իր համարում, տպելով յոբելեար Շիրվանզադէի կենսագրութիւնը, թոյլ է տուել իրան մի պատմական անճշդութիւն, որ ուղղելը մեր բարոյական պարտքն ենք համարում։ Մեզ համար տհաճելի է, ի հարկէ, այսպիսի մի օր զբաղվել հերքումներով, բայց առ յարգանս «Մշակի» հիմնադրի յիշատակի, խնդիրը վերաբերելով պատմական ճշտութեան, որի դէմ մեղանչում է «Հօրիզօնը», մենք ստիպված ենք կատարել այդ այժմ անհաճոյ պարտականութիւնը։

«Հօրիզօնը» յայտնում է, որ երբ նոյն միջոցներին, երբ Շիրվանզադէն «Արձագանքի» մշտական աշխատակից էր (Շիրվանզադէն մտել է «Արձագանքի» մէջ 1886 թ.), Գրիգոր Արծրունին հրաւիրում է նրան մշտական աշխատակից «Մշակի», բայց Շիրվանզադէն անյարմար է համարում թողնել «Արձագանքը»։ Այն ժամանակ Արծրունին խնդրում է գէթ հեռուից աշխատակցել իրան, բայց ժամանակի սղութիւնը թոյլ չէ տալիս Շիրվանզադէին կատարել Արծրունու և այդ առաջարկը։

Այս տողերի իմաստ-նպատակն է ցոյց տալ, թէ Գրիգոր Արծրունին հրաւիրել և խնդրել է Շիրվանզադէին թողնել «Արձագանքը» և լինել «Մշակի» աշխատակից, բայց սա չէ կամեցել։

Արդ, երբէք Գրիգոր Արծրունին չէ խընդրել Շիրվանզադէին անցնել «Մշակին» և աշխատակցել։ Եւ ոչ միայն չէ խնդրել և չէ հրաւիրել, չէր էլ կարող խնդրել, քանի որ նա «Մշակի» մէջ այդ ժամանակներում յայտարարել է, թէ ոչ միայն «Մշակի» էջերը, այլ նոյն իսկ խմբագրութեան շեմքը յաւիտեան փակված կը լինի Շիրվանզադէի առաջ։

Ցոյս ունենք, որ «Հօրիզօնը», որ իր սայթաքուն յօդուածով անտեղի կերպով ստիպեց մեզ այս բաները գրել, չի ստիպի մեզ առաջ բերել Գր. Արծրունու յօդուածը։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտը սիմֆերօպօլցի Տարնօվսկիի կտակով նուէր ստացաւ 450,000 րուբլի արժեցող մի անշարժ կալուածք։

◆ Կ. Պօլսում յուզված տրամադրութիւնը Ռուսաստանի դէմ դեռ շարունակվում է։ Թիւրքական մամուլը սոսկալի յանդգնութեամբ է խօսում Ռուսաստանի հասցէին։

◆ Նորոգ հանգուցեալ յայտնի պատմաբան Կլիւչեվսկիի որդին շարունակ ցաւակցական հեռագրեր է ստանում Ռուսաստանի բազմաթիւ տեղերից խոշոր և անփոխարինելի կորստեան առիթով։

◆ Րօստօվում Դ/վ. երևան հանվեց խոլերայով մի հիւանդ։

◆ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը, ըստ երևոյթին, գոհ է Րիֆաթ-փաշայի պատասխանից։ Ցամենայն դէպս, Թիւրքաց ղեկավար շրջաններում գտնում են, որ ռուսաց նօտայի հարցը սպառված է համարվում։

◆ «Zeit»-ը ապացուցում է, թէ Ռուսաստանը իր ուզածին հասաւ. Րիֆաթ-փաշան յայտնեց, որ Թիւրքիան թշնամական մտադրութիւններ չունի դէպի Չերնօգորիան։ Ռուսաստանի պրէստիժը այդպիսով ուժեղանում է Բալկանում։

◆ Թիւրքաց լրագիրների յօդուածների մէջ Ռուսաստանի հասցէին ուղղակի հայհոյանքներ են պարունակվում։ Գալատի կուլուարներում շատ պատգամաւորներ բացէ ի բաց յայտնում են, թէ Թիւրքիան իր պատասխանով լաւ ապտակ տուեց Ռուսաստանին։

◆ Կ. Պօլսի ռուսաց դեսպան Չարիկօվի դրութիւնը ռուս-թիւրքական սուր յարաբերութիւններից յետոյ համարվում է խախտված։

◆ Կ. Պօլսում յամառ կերպով խօսում են, որ Ռուսաստանը իր բողոքի մէջ մնաց առանց Եւրոպայի աջակցութեան և երբ Չարիկօվը արժանացել է մինիստրութեան շնորհակալութեան կառավարական հաղորդագրութեան տոնը մեղմելուն համար, որի պատճառով կարելի եղաւ խուսափել միջադէպ ունենալուց Թիւրքիայի հետ, որից (միջադէպից) այնպէս վախում է Ռուսաստանը։

◆ Բոլգարական ամբողջ սահմանագլխի շուրջ ընդհարումները շարունակվում են։ Կարող են ամենալուրջ հետևանքներ առաջ գալ։

◆ Թիւրքական մի թռուցիկ ասում է. «Սլաւօնները ստախօսներ են և անպիտաններ. և նրանց վրա պէտք է յարձակվել առանց որևէ նախազգուշացման, ինչպէս արին եապօնացիները, որոնք՝ շնորհիւ դրա՝ յաղթութիւնը տարան»։

◆ Բոլգարական դեսպանը հերքում է Բոլգարիայի և Թիւրքիայի միջև սկսված յարաբերութիւնների յուզիչ լուրերը։

◆ Բեռլինի և Վիէննայի կաբինէտները ամեն ջանք գործ են դնում, որ Բալկանում ֆեդէրացիա կազմելու գաղափարը չիրագործվի ընդդէմ Թիւրքիայի։

◆ Թիւրքիայի լարված յարաբերութիւնների մէջ Բոլգարիայի և Չերնօգորիայի հետ, որոշ էական փոփոխութիւններ չը կան։ Թիւրքաց մամուլը պատերազմ է պահանջում Բոլգարիայի դէմ։

◆ Կ. Պօլսում պաշտօնավարող բոլգարական դեսպանը կտրուկ ոճով բողոքեց Բ. Դրանը այն արշաւանքի դէմ, որ սկսել է Թիւրքական մամուլը Բոլգարիայի դէմ։

◆ Հակկը-փաշայի հրամանով հրացանազարկ եղան 50 քրիստոնեայ-զինուորներ իբր ապստամբների դէմ կռւելու մերժման համար։

◆ Լուրերին նայած, Թիւրք օֆիցէրները և նոյնիսկ Թիւրք զինուորները ծաղր ու ծանակի են ենթարկում շարունակ քրիստոնեայ զինուորներին, որոնք սկսել են փախչել զինուորական ծառայութիւնից։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ, լուրջ աղբիւրների համաձայն, Թիւրքաց զօրքերը ալբանների հետ կռւելու ժամանակ ահագին կորուստներ են ունեցել վերջերս. վիրաւորված զինուորների թիւը հարիւրների է հասնում։

◆ Ցէտինիէում զօրքերին բաժանվեց 10,000 նոր տեսակի հրացաններ։

◆ Դիպլոմատիական յարաբերութիւնները Չերնօգորիայի և Թիւրքիայի միջև իսկապէս խզվել են։ Բոլոր բանակցութիւնները կատարվում են Կ. Պօլսի ռուսաց դեսպանատան միջոցով։

◆ Կ. Պօլսում բացվեց սուլթանի կեանքի դէմ լարված դաւադրութիւն։ Ձերբակալվեցին ալբաններ, որոնք կամեցել էին յօդս ցնդեցնել այն գնացքը, որով ճանապարհորդելու է սուլթանը։ Դաւադիրների մօտ կատարված խուզարկութեան ժամանակ ծանր վիրաւորվեց գաղտնի ոստիկանութեան պետ Սամի-բէյը կրծքից։

◆ Պէկինի կառավարութիւնը խըստագոյնս պատուիրեց գաւառական իշխանութիւններին չը քննել կառավարութեան գործողութիւնները։

◆ Պարիզում միջազգային իրաւունքի ինստիտուտը բանաձև ընդունեց, որով պատերազմական գործողութիւնները օդում համարվում են ընդունելի։

◆ Բէլֆաստում (Անգլիայում) ծով իջեցրին աշխարհիս ամենախոշոր զրահանաւը, որ կարող է իր մէջ տեղաւորել 3346 հոգու։

◆ Լօնդօնում բացվեց միջազգային երաժշտական կօնգրէսը, որին մասնակցում են ներկայացուցիչներ բոլոր երկիրներից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

21 մայիսի

ԲԷԼԳՈՐՈԴ։ Ձիւն է գալիս. փչում է հիւսիսային քամի։

ԽԱՐԿՈՎ։ Ձիւն եկաւ։

Կ. ՊՕԼԻՍ։ Մայրաքաղաքի զօրքի մէջ երևան հանվեց խոլերային երկու դէպք։

ՄԻՆՍԿ։ Վելիկի Լուկիում տեղի ունեցան անկարգութիւններ. երբ եկան հողաչափները հողաբաժինները չափելու համար, մի քանի գիւղացիներ ագիտացիայի ազդեցութեան տակ թոյլ չը տուին, սպառնալով հրդեհումներով ու բռնութիւններով։ 16 դրդիչներ և ագիտատորներ կալանաւորվեցին և բանտարկվեցին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մինիստրների խորհուրդը ընդունեց եկեղեցական տարրական դպրոցներին կից գիւղատնտեսական պարապմունքներ հաստատելու օրինագիծը։

22 մայիսի

ՆԻԿՕԼԱԷՎ։ Բերեզօվկայի և Նօվօի Բուգի շրջակայքում կարկուտը՝ հեղեղի հետ՝ ահագին վնասներ տուեց։

ԿՐԱՍՆՕՅԱՐՍԿ։ Պետական Դումայի անդամ հանգուցեալ Կարաուլօվի փոխարէն ընտրվեց անասնաբոյժ Բօստօվինը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Եկաւ Սիամի գահաժառանգ Չակրոբօնը։ Բուխարական էմիրն ընդունվեց կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնայից։

ԱԽԱԼՔԱԼԱՔ։ Արշալոյսին ձիւն եկաւ։

ՏՕԿԻՕ։ Կավա նահանգում անսովոր երաշտ է։ Բնակիչները խմելու ջուր չունեն։

ՌՈՒԱՆ։ Տօնակատարութիւններ են Նորմանդիայի 1000-ամեակի առիթով։

Կ. ՊՕԼԻՍ։ Բաղդադի երկաթուղագծի վրա, Բիլէջիկ կայարանում, ապրանքատար գնացքի տակ կամուրջը քանդվեց։ Սպանված են մեքենավարը և կաչեգարը, վիրաւորված են 4 կօնդուկտօրներ։

ԽԱԲԱՐՕՎՍԿ։ Եկաւ Գուչկօվը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒԴԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՁԻԼԲԵՐՁԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՁԻԼԲԵՐՁԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—49

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր (առաւօտ. ժ. 9—12
(երեկոյեան ժ. 5—7
(ե. հ. կ.) 1254. 100—71

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւօտեան ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմենօվսկայա փողոց, № 16.
Տելեֆօն № 40.
(ե.ու.կ.) 220. 100—28

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
ՄԵԿՆԵՑ ԿԻՍԼՕՎՕԴՍԿ
(չ.ու.կ.) 1134. 100—96

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(օ. մ.) 1179. 100—96

Դ-ր Վ. ԱՐԾՐՈՒՆԻՆ
ՄԵԿՆԵՑ ՊԵԱՏԻԳՕՐՍԿ (Կովկասեան հանքային ջրեր), որտեղ կընդունի հիւանդներին մինչև սեպտեմբերի 1-ը։
(ե.հ.շ.) 1227. 100—86

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատրաստ է տպագրութեան համար
Ս. ՊՇԻԲԸՇԵՎՍԿԻԻ
„Золотое руно“
դրամայի հայերէն թարգմանութիւնը։
Գրիգոր Եղիազարեան
566. 2—1

ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ԱՏԵԱՆՈՒՄ
Նշանակված է
աճուրդ եւ կրկնաճուրդ
վարձով տալու վանքապատկան գիւղերի սոյն 1911 թ. վանքի 1/5 մաս ցորենի բահրան ըստ այսմ.
Վաղարշապատ և Օշական գիւղերի աճուրդը յունիսի 3-ին, իսկ կրկնաճուրդը՝ 6-ին։
Եղուարդ և Մաստարա գիւղերի աճուրդը յունիսի 10-ին, իսկ կրկնաճուրդը՝ 13-ին։
(ա. օ.) 557. 3—2

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.
Լոյս տեսաւ Փիլիպպոս Վարդանեանի անգլիերէն բնագրից կատարած թարգմանութեամբ
ԼՈՒԻՍ ՈՒՕԼԼԷՍԻ
ԲԷՆ ՀՈՒՐ II ՀԱՏՈՐ
Երկու հատորի գինը միասին 1 ր. 50 կ.։ Դիմել՝ Кавк. Арм. Издательское О-во. Бебутовская ул. № 25.
(ե.չ.շ.կ.) 563. 5—2

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԽԱՂ
5 տիրաժ, իւրաքանչ. մէջ գլխաւոր գումարը
ՄԷԿ ՄԻԼԻՕՆ
Մօտակայ տիրաժը 7/20 յուլիսի։
Բոլոր տիրաժների արժէքը 16 րուբ.
Մասնաւ. պատուէր տալուց 6 ր., սեպ. և նոյ. 5ր.
Փողը կարելի է ուղ. և ռուս. պօստ. մարկաներով։
Տիրաժի թղթերը ուղարկվում են ձրի։
ԸՆԿ. ԲԵՐՆԱՐ եւ ԿՕՄՊ., ՊԱՐԻԶ
30, Սէվաստօպօլսկի բուլվար, 30.
Գրել և հասցէագրել կարելի է ռուսերէն։
(B. 36380) 383. 18—7

Մի հայ աղքատ ուսուցչուհի, որ ունի 4 մանկահասակ զաւակներ, որոնց հայրը 75 տարեկան ծերունի լինելով՝ զրկված է աշխատանքից, խնդրում է հայ բարերարներից, այդ որդկերանցից մէկին որդեգրել ուսում տալու համար։ Հասցէն՝ Станція Калагеранъ, въ селеніе Дисехъ. Екатеринѣ Мамиконянъ.
1—1

Տաշկենտի հայոց աղօթատան համար հարկաւոր է
ՄԻ ՀՄՈՒՏ ՏԻՐԱՑՈՒ
հաճելի ձայնով, գիտակ եկեղեցական ձայնագրութեան և ազգային-ժողովրդական երգերի, որ և կարողանայ դպրոցում երգեցողութեան դասեր վերցնել առանձին վարձատրութեամբ։ Տիրացուական տարեկան եկամուտը ռոճիկի հետ միասին 500 ր., չը հաշւած դասերը։ Գերադասելի է առանց ընտանիքի։ Տրվում է սենեակ։ Դիմել՝ Ташкентъ, Свящ. Маркосу Теръ-Мкртчьянцъ.
(օ.մ.) 533. 3—3

8000
ՊԱՏԿԵՐ ՁՐԻ
մենք բաժանում ենք այս լրագրի ընթերցողներին՝ մեր ձեռնարկութիւնը արագ տարածելու նպատակով։ Ուղարկէք մեզ Ձեր լուսանկարը (հին կամ նոր, մենակ, երկու հոգով կամ խըմբովին նկարված), մակագրելով նրա ետևի կողմի վրա Ձեր ճիշդ հասցէն, և դուք շուտով կը ստանաք Ձեր՝ իսկական նմանութեամբ, 36 սանտ. լայնութեան, 46 սանտ. բարձրութեան՝ համարեա
ԲՆԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՁՐԻ։
Միակ ծառայութիւնը, որը փոխադարձաբար մենք Ձեզանից խնդրում ենք՝ այն է, որ Դուք Ձեր պրէմիա-պատկերը ստանալուց մեր ֆիրման յանձնարարէք Ձեր բարեկամների ու ծանօթների շրջանում։ Ձեր լուսանկարը կը վերադարձվի Ձեզ իր իսկական դրութեան մէջ։ Ճանապարհածախքի, փաթաթելու և այդ ծախքերի համար խնդրում ենք ուղարկել **75** կ. մարկաներով, կամ թէ վերադիր վճարով—**95** կ.։ Թղթակցութիւնները գերմաներէն կամ ռուսերէն։
Общество „СЕМИ-ЭМАЛЬ“. Лодзь, № М. 52.
(չ.ե.) (B. 43612) 530. 2—2

Լոյս տեսաւ
ԳԱՂՏՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԲԺՇԿԱՐԱՆ
նկարներով։ Տղամարդի և կնոջ ծածուկ հիւանդութիւնները, վարակվելուց ազատ մնալու կանոնները և այլն։ Բազմաթիւ **խորհուրդներ եւ ռեցէպտներ**։ Անհրաժեշտ գիրք բոլոր չափահասների համար, մանաւանդ գաւառներում, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Գինն է 50 կօպ.։ Ճանապարհածախսով 65 կօպ.։ Կազմեց մէդիցին. ֆէլդշէր Ա. ԽՍԱՅԵԱՆ։ Ծախվում է Թիֆլիսում «Կենտրօնական» և «Գուտտենբերգ» գրախանութներում և հեղինակի մօտ։ Նաև ծախվում է «Սուսանիկ և նրա բժշկութիւնը», նկարներով, խորհուրդներով և ռեցէպտներով։ Գինը 20 կօպ., ճանապարհածախս 15 կ.։ Պահանջի մեծութեան պատճառով ապառիկ կամ նալօժով չէ ուղարկվում։ Առաջուց ուղարկել պօստի մարկաներ։ Հասցէն՝ Թիֆլիս, Семеновская № 9. Գումարով պահանջողները զեղչի մասին թող դիմեն առանձին։
(ե.ու.կ.) 352. 50—18

ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(Իզմայլովսկի պր., № 27)
Պարիզ 1900. ՈՍԿԷ ՄԵԴԱԼ Նիժնի-Նովգօր. 1896.
ХИМИЧЕСКАЯ ЛАБОРАТОРІЯ С.ПЕТЕРБУРГСКАЯ
ЗАЯВЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ
ՔԻՆԱՅԻ ՊՈՄԱԴԱ
ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ եւ ԹԵՓԻ ԴԷՄ
Ընտանեկան պոմադա։ Ֆիլօկօմ պոմադա։ Պոմադա-վազելին։
Գլխաւոր պահեստը. Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами—Тифлисъ, Баку, Батумъ.
521. 8—1

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը համաձայն կտակի հանգուցեալ տիկին Նունէ Ղամբարեանի, սրանով յայտարարում է ի գիտութիւն, որ տրվում է երկու մրցանակ, որպէս վարձատրութիւն ամենաընտիր աշխատութիւնների գրված հայկական լեզւով Կովկասի և Փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան և ազգագրութեան մասին։ Մրցանակաբաշխութեան մասնակցելու թոյլատրվում է Ներսիսեան հոգևոր դպրոցի և Էջմիածնի հոգևոր ճեմարանի այն բոլոր աւարտած սաներին, որոնք իրանց ուսումն աւարտել են մրցանակաբաշխութեան օրից ոչ աւել առաջ քան հինգ տարի։ Մրցանակները տրվում են առանձին մասնախմբից, բաղկացած հինգ հոգուց, որոնց ընտրում է Ներսիսեան հոգևոր դպրոցի ուսուցչական ընդհանուր ժողովը իր միջից և մասնաւոր անձերից։ Որպէս ցանկութիւն, հանգուցեալը խնդրել է գոնէ երկու անդամները միշտ ընտրվեն մասնաւոր հեղինակաւոր անձերից։ Ցիշեալ պայմանների հիման վրա հանգուցեալ Նունէ Ղամբարեանի երրորդ մրցանակաբաշխութիւնը լինելու է 1912 թւի մինչև մայիս ամիսը։
1) Հեղինակութիւնները պէտք է ուղարկվեն Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան 1911 թւի հոկտեմբեր ամսից ոչ ուշ։
2) Հեղինակութիւնները պէտք է ունենան խորագիր, իսկ հեղինակի անունը պէտք է նշանակված լինի փակ ծրարի մէջ նոյն խորագրի տակ, որպիսի ծրարը բացվելու է միայն մրցանակաբաշխութեան որոշումից յետոյ։
3) Մրցանակաբաշխութեան հարցը որոշելուց յետոյ, հեղինակութիւնները կարելի է յետ ստանալ կամ անձամբ, կամ հաւատարմաթղթով։
4) Մրցանակի արժանացած շարադրութիւնների, նրանց հեղինակների և տարած պրէմիայի քանակութեան մասին կը հրատարակվի լրագիրներում։
5) Առաջին պրէմիայի քանակութիւնը հաւասար է 400 ր., իսկ երկրորդ պրէմիայի քանակութիւնը 100 րուբլու։
(կ.) 542. 3—1

ԹԻՖԼԻՍՈՒՄ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐԱԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
8-ԴԱՍԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ
Ընդունելութեան քննութիւնները կը սկսվեն մայիսի 31-ին, յունիսի 1-ին, 2-ին, 3-ին և 4-ին։
Այբուբենական բաժանմունքը մտնելու համար քննութիւն չէ պահանջվում։ Խնդիրների ընդունելութիւնը մայիսի 10-ից։ Елизаветинская ул., № 79.
(օ. մ.) 494. 5—5



ՀԻՊՆՕՏԻԶՄԻ
ԹՂԹԱԿՑԱԿԱՆ ԿՈՒՐՍ
Հիպնօտիզմը սահմանված է լինել ամենաուժեղ միջնորդը բուժական կրթական և բարենորոգչական զարգացման մէջ։ Որ հիպնօզական երևոյթը գոյութիւն ունի և որ ամեն ոք ենթարկվում է այդ բնական ույժի ազդեցութեանը, այլ ևս կասկած չի վերցնում։ Հիպնօտիզմի կարևորութիւնը ընդունված է բոլոր նրանցից, որոնք ուսումնասիրած են այս գիտութիւնը։ Հիպնօտիզմի հակառակ խօսում են միայն նրանք, որոնք սխալ են ըմբռնած ներշնչման օրէնքը։
Ներշնչման սկզբունքի մէջ է գտնվում աջողութեան և առողջութեան ուղին և ույժի-մուտքը։
ՍՈՎՈՐԵՑԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ. ՍՈՎՈՐԵՑԷՔ ՆԵՐՇՆՉԵԼ։
Հիւանդութիւնը անբնական է. սովորեցէք դարմանել ձեզ ձեր հիւանդութիւններից ձեր սեփական հոգու զօրութիւնով։
Մտախորհուրդը ույժ է. սովորեցէք ուղղել ձեր մտախորհուրդը յօգուտ ձեր առողջութեան, երջանկութեան և աջողութեան։
Մասնագէտ հիպնօտիստ Յարութիւն Շէքէրջեանը պատրաստած է մի **թղթակցական կուրս** հայերէն լեզւով հայերի համար։ Այս կուրսը պարզ և հասկանալի լեզւով պարզում և բացատրում է հիպնօտիզմի և մագնետիզմի բոլոր երևոյթը, և սիստէմի վերածված դասերով սովորեցնում է ընթերցողին այս «խորհրդաւոր» գիտութեան բոլոր գաղտնիքները։
Հիպնօտիզմ կարող է սովորել ամեն ոք։
Հիպնօտիզմի կուրսի արժէքի և այլ մանրամասնութիւնների համար պէտք է ուղարկել 10 կօպէկի նամականիշ և ստանալ նոյն հեղինակի **«Ինչպէս հիպնօտացնել»** գրքոյկը։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago Ill. U. S. A.
(ե.շ.) 689. 100—94

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.